№ 17 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 25 — 1906 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 25 № 17

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Յունվարի 1-ից մինչև 1 յուլիսի 4 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարելի է արդեօք մեղադրել. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Դէպքերը Վրաստանում. Դրութիւնը Ջիւանշիրում. Կարիքը Նուխու և Արեշի շրջանում. Նոր քաղաքական կուսակցութիւն. Ռուսական աւետարական և արգիւնաբերական ձեռնարկութիւնների ներկայացուցիչների համաժողովը. Երգչուհի օրիորդ Պապայեան. Հիւպատոսական լուսաբանութիւնները. Էջմիածնի Ճեմարան. Դարձեալ կենդրոնացման և ֆէդերացիայի խնդիրը. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ֆրանսիական պրօլետարիատի մի մանիֆեստ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿԱՐԵԼԻ Է ԱՐԴԵՕՔ ՄԵՂԱԴՐԵԼ

Մենք մի քանի անգամ լսել ենք մեղադրանք թուրքերի կողմից, թէ ինչու հայերը նրանց աչքաթող են արել և չեն աշխատում ընտելացնել թուրքերին այն կուլտուրական և քաղաքակրթական գործերին, որով իրանք զբաղված են:

Այդպիսի մի մեղադրանք յայտնելը երկու տեսակ տպաւորութիւն է թողել մեզ վրա: Մի կողմից մենք հաճութիւն ենք զգացել տեղեկանալով, որ մահմեդականների մէջ պահանջ է զգացվում կուլտուրական և քաղաքակրթական առաջադիմութեան, իսկ միւս կողմից մենք զարմացել ենք այդպիսի մի անտեղի մեղադրանքի երևան գալու վրա:

Հայը միշտ ուրախ է եղել, երբ տեսել է իր թուրք հարևանների մէջ շարժում դէպի եւրօպականութիւն և որքան կարողացել է, խրախուսել է այն սկզբնական քայլերը, որոնք արել են թուրքերը նոր գործի ճանապարհի վրա:

Ճիշտ է, հայի պրածը թուրքերի համար մեծ չէ եղել, բայց և այնպէս հայի հասարակութիւնը ստեղծել է մի նպաստաւոր մթնոլորտ թուրքերի կուլտուրական գործունէութեան համար: Չը պէտք է մոռանալ և այն, որ հայի համար այնքան էլ նպաստաւոր չեն եղել թուրքերի մէջ գործելու պայմանները: Այնպիսի նահապետական և խաւար մասսաների մէջ, ինչպէս են մահմեդական մասսաները, շատ խէթ աչքով են նայում նորամուծութիւնների վրա մանաւանդ այն դէպքում, երբ այդ նորամուծութիւններ անողը օտար է իր ազգութեամբ և կրօնով:

Նոյն իսկ հայ ժողովրդի մէջ այնքան էլ նպաստաւոր և նախանձելի չէ բարենորոգիչների դրութիւնը: Միթէ մենք մոռացել ենք այն հարիւրաւոր բամբասանքները և զրպարտութիւնները, որ թափվում էին հէնց մեր լրագրի վրա, երբ մենք կռւում էինք հայրենի նախապաշարմունքների դէմ, մերկացնում էինք մեր հասարակութեան պակասութիւնները, քննադատում էինք մեր գործողներին:

Մեզ անուանում էին այդպիսի լաւագոյն և միանգամայն փրկարար գործունէութեան համար ազգի թշնամիներ և դաւաճաններ, ազգի խորթ զաւակներ, ուրիշ հացին իւղ քսողներ, հայերէն տառերով՝ այլաշահ մամուլի ներկայացուցիչներ:

Այդպէս ասում էին, այժմ էլ փորձում են ակնարկներ անել նաև մեր օրերում, իսկ ապագայում նորից կասեն նոյնը մեծ ու փոքր չափերով, երբ մենք կըսկսենք աւելի սերտ կերպով շփվել մեր բազմաթիւ հասարակական գործերի հետ, որոնք այժմ հերթի չեն կոչվում հայթուրքական և ուրիշ յուզմունքների պատճառով:

Եթէ նոյն ազգին պատկանող և այն էլ «կուլտուրական» հռչակ վայելող հայ ազգին պատկանող բարենորոգիչները հրապարակվում են օտարներ և թշնամիներ, որքան աւելի ծանր և դժուար է այն մարդկանց դրութիւնը, որոնք գործում են օտար ամբոխի և այն էլ այնպիսի ագէտ և ֆանատիկոս ամբոխի մէջ, ինչպէս է մահմեդական ամբոխը:

Թէև մենք սիստեմական գործունէութիւն չենք ունեցել մահմեդական մասսաների շրջաններում, բայց և այն, ինչ որ մենք արել ենք հէնց մեզ համար, նա յաճախ գրգռել է մահմեդական մեր հարևանին և նա երկիւղներ է կրել, որ մի գուցէ մենք վատ օրինակ դառնանք նրանց համար:

Դուք կարծում էք թուրք ամբոխը ախորժում է տեսնելով հայ կանանց ազատ նիստ ու կացը, հայ երիտասարդների ազատ մտածողութիւնը և զանազան հասարակական ձեռնարկութիւններ:

Նա նայում է մեծ կասկածով այդ բոլորի վրա և եթէ մի տեսակ հաշտվում է նրանց հետ, այդ անում է նա այն պատճառով, որ իրան, իր համայնքին չէ վերաբերում և առ այժմ հեռու է իր ազդեցութեան և տրամադրութեան շրջանից:

Ճիշտ է, երկար ժամանակի ընթացքում նրա աչքը ընտելանում է նոր երևոյթների և նա կամաց-կամաց հաշտվում է դրանց հետ, բայց մինչև որ նա տրամադիր կը զգայ իրան մարմնացնելու օտար կարգերը և գաղափարները իր կեանքի մէջ, հարկաւոր կը լինեն մեծ ջանքեր: Եւ անկասկած, այնքան աւելի մեծ կը լինի անվստահութիւնը, որքան օտար կը լինի նրա համար գործողանձը:

Հայերը գործել են թուրքերի համար թատրօնական, արդիւնագործական, վաճառականական ասպարէզներում և որոշ առաւելութեան օգուտ են տուել, բայց վերանորոգիչների դերեր չեն վերցրել իրանց վրա և կը դժուարանային վերցնել թէ վերև յիշած և թէ մի քանի ուրիշ աննպաստ հանգամանքների շնորհիւ:

Բայց այստեղ մի կարևոր հանգամանք կայ, որ պէտք չէ աչքաթող անել: Ահա այդ հանգամանքը: Հայերը ամենևին այնքան բարեկեցիկ, կրթված և զարգացած չեն, որ խսկապէս օրինակելի համարվեն: Հայերը ծախսող պայմանների շնորհիւ շատ յետամնաց մի ազգ են և մեծ կարօտութիւն ունեն սեփական առաջադիմութեան ու զարգացման: Հայը դեռ ինքը դպրոցներ չունի, աղքատ է անտեսապէս, զուրկ է զանազան օգտաւէտ ընկերակցութիւնների և հիմնարկութիւնների աջակցող օգնութիւնից: Նա ոչ միայն բաւականաչափ գործողներ չունի իր համար, այլ և անկարող է շուտով պատրաստել գործողների այն լեգէոնները, որոնք անհրաժեշտ են նրա ժողովրդի կուլտուրական կարիքները լրացնելու համար:

Մեղադրել հային թէ նա քիչ է գործում թուրքի համար այդպիսի հանգամանքներում, բոլորովին անտեղի է:

Դատեցէք ինքներդ:

Դեռ երէկ հայի տէրը համարվում էր մահմեդականը և այսօր էլ նա է Թիւրքիայում և Պարսկաստանում ամեն բան կարգադրողը: Միթէ մի ազգից, որ ստրկութեան էր մատնված, կարելի է պահանջել, որ նա խելք ցոյց տայ իր ղեկավարներին, նա առաջնորդ հանդիսանայ տիրապետող տարրի զարգացման համար:

Պահանջել չէ կարելի ոչ մի դէպքում: Բարոյական ոչ մի իրաւունք չը կայ այդպիսի մի պահանջի համար: Մի անգլիացի չէ կարող պահանջել, որ նրա հպատակ հնդիկը իրան խելք սովորեցնէր, մի ֆրանսիացի չի պահանջի, որ իր հպատակ մադագասկարցին իրան մտաւոր ղեկավար հանդիսանար և այլն և այլն:

Ուրեմն՝ պահանջի և մեղադրանքի հարցը դէն շպրտենք և նրա տեղ դնենք մի ուրիշ սկզբունք՝ փոխադարձ համերաշխութեան և օգնութեան սկզբունք: Իսկ երբ այդպէս կը դնենք հարցը, այն ժամանակ և ուրիշ ելք կը ստանայ խնդրի լուծումը:

Այդ մասին մի ուրիշ անգամ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակից կոչէն վարդապետը հեռագրում է մեզ, յունվարի 24-ին.

«Երէկ կայացաւ գերված կանանց և երեխաների փոխանակութիւնը. մենք տուինք 12 հոգի, ստացանք 9 հոգի»:

—

Գանձակ, 23 յունվարի.

Գեներալ-նահանգապետի նախագահութեամբ կայացաւ խորհրդակցութիւն, ապահովելու ճանապարհների հաղորդակցութիւնը և մարդկանց երթևեկութիւնը Գանձակի նահանգում՝ մայրենից և տաւարի սար տեղափոխվելու ժամանակ: Փոխ-նահանգապետ Բարանօվսկու աջակցութեամբ այսօր տեղի ունեցաւ գերիների փոխանակութիւն հայերի և թուրքերի միջև:

—

Ղազախ, 23 յունվարի

Այստեղի թուրքերը, տեսնելով իրանց կրօնակիցների պարտութիւնը՝ դիմեցին Գանձակի նահանգապետին: Իրանց հեռագրի մէջ նրանք յայտնում են, որ հայերը ընդհանուր արշաւանք են սկսել թուրքերի դէմ, այրվել է Ջաբարլի գիւղը, այրվում են Չախմախլի և Ղըզլ-Հաջիլի թուրք գիւղերը: Իբր թէ հայերը կոտորել են Ղըզլ-Հաջիլու մանուկներին և կանանց: Հայերը սկսել են յարձակում Յանուխլար գիւղի վրա: Աբրաքէգլիցիները փախչում են: Կօզակների երկու հարիւրեակների դէմ իբր թէ հայերը տուել են զալպեր:

—

Ղազախ, 23 յունվարի.

Տեղական վարչութիւնը, դիմելով Գանձակի նահանգապետին, նկարագրում է ընդհարումների սուր արտայայտութիւն ստանալը: Խնդրում է օգնութիւն զօրքով ու թնդանօթով:

Հայ-թուրքական ընդհարումները խլել են զոհեր երկու կողմերից էլ: Հարիւր հոգուց աւելի մարդ արդէն սպանված է: Շուտով զօրքերի թիւը կը հասնի հազար հոգու, բացի կօզակներից: Ցարաբերութիւնները լարված են:

—

Երևանից մեզ հեռագրում են յունվարի 12-ին: Հաջի-գովար գիւղից Բազոտխին գիւղ գնացող 7 թուրքի վրա յարձակվել են 9 հոգի անյայտ չարագործներ և գնացողներից երեքին սպանել են, իսկ մնացեալ 4 հոգին կարողացան փախչել:

—

Երևանից մեզ հեռագրում են, որ յունվարի 19-ին Երևանի նահանգի բանտից փախել են 3 բըէկական կալանաւորներ՝ Մուխտար Քերբալայ-Ալի-օղլի, Աբդուլ-Բաշիդ Մուսիւլում-օղլի և Բայրամ Աբաս-օղլի:

—

Երևանից մեզ հեռագրում են, որ յունվարի 19-ին, Երևանում համբերողութեան տան և կօզակների աղբիւրակի մօտ գտնված է 1 կօպակի գնդակահար դիակ. քննութիւնը շարունակվում է:

—

Երևանից մեզ հաղորդում են, որ յունվարի 8-ին Ներրամ գիւղին մօտ անյայտ չարագործները սպանել են 2 թուրքի, և մէկին վիրաւորել:

—

Դարալագեազի մի քանի գիւղացիներ, մտնելով մեր խմբագրատուն, պատմեցին մեզ հետևեալը.

«Շարուրի շրջանում թուրքերը հանգիստ չեն մնում: Դարձեալ մի քանի հայեր զոհ գնացին թուրքերի սրին:

Յունվարի 4-ին եօթը հայ, դուրս գալով Խաչիկ գիւղից, գնում են դէպի երկաթուղի՝ Երևան ուղևորվելու նպատակով: Երեկոյեան դէմ հասնում են Ենգիջա կայարանը: Այնտեղ մնում են սպասել մինչև գնացքի գալը, որ պէտք է տեղի ունենար ժամի 10-ի մօտերքը:

Ժամի 8-ից յետոյ հայերը անհետանում են: Թուրքերը յարձակվում են նրանց վրա և սրի անցկացնում: Կայարանի գլխաւորը հեռագրով իմաց է տալիս Բաշ-Նորաշէնի պրիստաւին և խնդրում է օգնութիւն. բայց պրիստաւը գալիս է միայն առաւօտեան ժամի 8-ին:

Եղեռնագործութեան տեղում մնացած են լինում միայն հայերի գդակները և արեան հետքեր: Վիրաւոր թէ սպանված հայերը անհետացրած են: Պրիստաւը ոչինչ չէ ձեռք առնում յանցաւորներին գտնելու և բռնելու համար:

Հայերը դիմել են թէ գաւառապետին և թէ նահանգապետին:

Մի ուրիշ դէպք:

Հասան գիւղի Ամբատ անտառապահի որդին, որ դպրոցիր է Յանըխլար գիւղում, գործերով գնում է Բաշ-Նորաշէն, բայց այլ ևս չէ վերադառնում:

Թուրքերը առհասարակ սկսել են իրանց շատ յանդուգն պահել այն տեղերում, ուր փոքր ի շատէ ուժեղ են զգում իրանց: Զուլ գիւղի թուրքերը նորերս չընդունեցին գիւղ հարկահան ոստիկաններին և սպառնացին նրանց: Ոստիկանները վերադարձան և գեկուցին գաւառապետին:

Հայերը անհանգիստ են առաջիկայ գարնան համար»:

—

Դարալագեազ, յունվ. 15-ին

Դարալագեազում դրութիւնը գնալով վատանում է:

Ներկայ ամսի սկզբներին մեր հարևան Նրեանի գաւառի գիւղերից, 3 հայեր եկել էին մեր գաւառը բրինձ և այլ մթերքներ գնելու, բայց թուրքական Զիվա գիւղի մօտ թուրքերը նրանց սպանել են և գլուխները անյայտացրել: Դէպքի միւս օրը, Զիվա գնաց պրիստաւը և ձերբակալեց 4 թուրքերի, որոնց վրա հաստատվում է այդ սպանութիւնը: Թուրքերին ուղարկեցին Բաշնորաշէն: Ինչ կը լինի հետևանքը: Պարզ է: Գաւառապետը նրանց բոլորովին արդար ճանաչելով, կարձակէ:

Նախիջևանի գաւառի Ջահրի գիւղացի մի թուրք, որ վարում է գաւառակում անտառային պահապանի պաշտօն, շրջում է այստեղի թուրքական գիւղերը, և ազատ պրոպագանդա է անում ընդդէմ հայերի, տարածելով, որ հայերը Ջահրի գիւղի թուրքերին բոլորին կոտորել են և որ հարկաւոր է այստեղի հայերից վրէժ լուծել:

Յունվարի 15-ին Հէր-Հէր, Գէնդէվազ և Ղուշչի գիւղերի հայերը լուր բերին որ իրանց շրջակայ թուրքերի մէջ տեսնվում է պատրաստութիւն հայկական գիւղերի վրա յարձակվելու (այդ բանը նրանք իմացել են մի մօտ ծանօթ թուրքից): Վերոյիշեալ գիւղերի հայերի դրութիւնը շատ վտանգաւոր է, մանաւանդ Հէր-Հէր և Գէնդէվազ գիւղերի, որովհետև այս 2 գիւղերի ազգաբնակութեան կէսը թուրքեր են բացի այդ, վերոյիշեալ 3 գիւղերը շրջապատված են 20-25 թուրքական գիւղերով:

Գաւառապետը իր օգնականի հետ շարունակում են իրանց հայակերութիւնը: Անցեալներումս, օգնական Սկիբինսկին մօտ 30 կօզակներով եկաւ Մալիշկա: Վերադարձին մալիշկացիների այգիների մօտով անցնելիս, նրա մտերիմ թուրք Մաշիթը նրա ներկայութեամբ կրակ է տալիս, նոյնը անում են և կօզակները: Այդ տեղից փախչելով, կօզակները գնում են Բէշիշբեանդ հայկական գիւղը, իսկ ինքը Սկիբինսկին Մաշիթը և 4 կօզակների հետ գնում է թուրքական Մօզ գիւղը, որտեղից յաջորդ օրը գնում է Բաշնորաշէն:

Իսկ Բաշնորաշէն գալով, նա պաշտօնապէս յայտնել է նահանգապետին, որ Մալիշկա հայկական գիւղի մօտ, նրա վրա յարձակվեցին հայ ֆիդաիները և ինքը փախչելով Մօզ թուրքական գիւղը ազատվեց: Անցեալներումս, մեր գաւառից 2 հայ ներկայացուցիչներ Թիֆլիսում ներկայացել էին Սուլթան-Կրիմ-Գիրէյին, պատմել էին գաւառի դրութեան մասին և խնդրել էին պաշտպան անօրինութիւն, հեռացնելու գաւառապետ Չերքեզովին, արձակել Շարուրի բանտից Սկիբինսկու ձերբակալած 10—12 անմեղ հայ բանտարկեալներին, որոնք իբր թէ մասնակցել են հօրս թուրքական գիւղի կոտորածին: Սուլթան-Կրիմ-Գիրէյն տուել է, որ որովհետև այդ մարդիկ բանտարկված են ադմինիստրատիվ կարգով և ոչ քննիչի կարգադրութեամբ, ուստի ես կտանեմ կարգադրութիւն նրանց արձակելու բանտից: Մեր ներկայացուցիչները վաղուց են վերադարձել, բայց մեր բանտարկեալների համար մինչև այժմ չէ եղել ոչ մի կարգադրութիւն և այդ անմեղ մարդիկ փթում են Շարուրի բանտում:

Մեր գաւառին կից, Գանձակի նահանգի Բօզար-չայ կոչված գիւղի մօլօկաները մի որոշ չափով աջակցութիւն են ցոյց տալիս թուրքերին ռազմամթերք ներմուծելու, և առհասարակ, հոգով, սրտով հակված են դէպի թուրքերը:

Այս է մեր դրութիւնը:

Վ. Ա. Դուլլաթեան

ԴԻՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Զինւորների չափազանցութիւնը մտածմունքի մէջ է գցել ոչ թէ միայն բնակիչներին, այլ և նահանգապետ ն. Պ. Պրինցին: Պրինցը, ինչպէս լսվում է, գեն. Ալիխանօվի ուշադրութիւնն է դարձրել զինւորների վարմունքի և այնտեղի բնակիչների ճնշման վրա: Երեկոյեան ժամը 5-ից, տակ է պրինցը Ալիխանօվին, մարդ չէ վստահանում տանից դուրս գալ, վաճառականները իրանց բոլոր ապրանքները պահել են բնակարաններում, կամ պահեստներում. հացթուխներից խլում են հաց, և շատ այդ տեսակ անկարգութիւններ են անում. գեն. Ալիխանօվը խոստացել է այդ մասին միջոցներ ձեռք առնել. հէնց այդպէս էլ, յունվարի 20-ին յայտարարել էր Քութայիսում եղած բոլոր զինւորներին, որ ամեն մի ճնշում նրանց կողմից և անժամանակ կազարմաներից դուրս գալը սաստիկ արգելված է և յանցաւորը սաստիկ կը պատժվի: Յուսանք, որ Քութայիսի բնակիչները կազատվին այդ անկարգութիւններից:

—

Քութայիսի ոստիկանապետի պաշտօնը վարում է Տէր-Անտօնեանը:

—

Զուգդիդ աւանի նախկին աւագ յայտնի Գեղամեանը նշանակվեց Քութայիսի վարչութեան գլխաւոր: («Ցնօրիս-Փուրցելի»)

ՄԱՄՈՒԼ

Այսօրվայ արտաքին լուրերից կարելի է եզրակացնել, որ քաղաքական լուրջ բարդութիւնները Եւրօպայում շատ էլ անակնկալ չը պէտք է համարել: Գերմանական կիսապաշտօնական լրագրի յօդուածը սաստիկ տարօրինակ տպաւորութիւն է թողնում: Անհասանակ—ասում է այդ առիթով «Русск. Вѣд.» լրագիրը—արդէն վաղուց, թէ գերմանական, թէ անգլիական և թէ ֆրանսիական մամուլի մէջ ինչ որ ակնարկներ են լինում, որոնք ստիպում են երկիւղ կրել, թէ միջազգային բարդութիւնները հնարաւոր են: Դա ահագին դժբախտութիւն կը լինէր կուլտուրայի համար և պէտք է յուսալ, որ հասարակութեան խոհեմ շրջանները շահագրգռված բոլոր երկիրներում թոյլ չեն տայ, որ կառավարութիւնները կռւի մէջ ձգեն ժողովրդի մասսաները, որոնք բնաւ որ և է շահ չունեն այդ պատերազմի մէջ: Եւրօպական դիպլօմատիայի պարտաւորութիւնն է ներկայումս բոլոր հնարաւոր միջոցներով հեռացնել այն վտանգը, որ սպառնում է խաղաղութեան:

*

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրատարակութիւնից յետոյ Ռուսաստանում կազմակերպվեցին բազմաթիւ քաղաքական կուսակցութիւններ, որոնց թիւը հասնում է այժմ 16-ի: Նորերս կազմվեց և մի նոր կարևոր կուսակցութիւն «Демократическій реформъ партія» անունով, որի ծրագիրը շատ մօտ է սահմանադրական-դէմօկրատիական կուսակցութեան ծրագրի հետ: Այդ առիթով, վերոյիշեալ լրագիրը ասում է. «Ազատութեան և պարլամենտականութեան ամենահին երկրում, Անգլիայում, մինչև վերջին ժամանակներս կռւում էին իրար հետ գերակշռութեան համար միայն երկու կուսակցութիւններ (պահպանողական և ազատամտական): Ֆրանսիայում քաղաքական կուսակցութիւններ շատ կան, բայց այնտեղ դրա պատճառը հարուստ պատմական անցեալն է և հասարակական մեծ բաժանումը: Մեր ռուսական քաղաքական կուսակցութիւնները իրանց ստորաբաժանումներով շատ բանի մէջ նման են ֆրանսիական սօցիալիզմի մատաղ տարիներին: Մինչև որ ֆրանսիական սօցիալիստները օրօրվում էին «ինքնաւորոշման» և իդէօլօգիայի մէջ, նրանց մէջ կազմվեցին «պօսսի բիլեռներ», «գեդիստներ», «ալէմանիստներ», «կօլլեկտիվիստներ» և նրանց ազգայնական կօնգրէսները շատ քիչ անգամ անցնում էին առանց ամբողջ հերձուածների, իսկ հասարակական նշանակութիւն սրանք շատ քիչ ունէին: Սակայն խոշոր դեր քաղաքական կեանքի մէջ ֆրանսիական սօցիալիստները սկսեցին խաղալ միայն այն օրից, երբ բոլոր այդ ֆրակցիաները միացան և դարձան առաջ երկու, յետոյ մի մեծ բանւորական կուսակցութիւն և մանաւանդ այն բոպէից, երբ վերջինս, միանալով դէմօկրատիական Բլօկի հետ, կանգնեց ի գլուխ այն վճռական կռւի, որ մղվում էր կղերականների և նացիօնալիստների դէմ և յօգուտ դէմօկրատիական կազմի վերջնական հաստատութեան կեանքի մէջ: Այժմ մեր սահմանադրական-դէմօկրատիականները աշխատում են նոյնպէս կազմել այդպիսի մի Բլօկ (միութիւն), բայց նրանց փորձերը դեռ չը պսակվեցին աջողութեամբ:»

Հասկանալի է, որ այս բոպէին, երբ վարչական բէպրէսալիները սաստկացած են, երբ նոյն իսկ հասարակութեան զանազան խաւերի մէջ ծագում է բէակցիան, սահմանադրական դէմօկրատները ցանկանում են միացնել բոլոր ընդդիմադիր ոյժերը և դրա համար Պետերբուրգում գումարված կուսակցութեան վերջին ժողովը անհրաժեշտ գտաւ, իբրև բոպէի գլխաւոր տակտիկա, որ ընդդիմադիր բոլոր կուսակցութիւնները միանան: Սակայն «Рус. Вѣд.» լրագիրը չէ կարծում, որ այժմ այդ դիտաւորութիւնը իրագործվի, քանի որ դեռ չեն իրագործված հոկտ. 17-ի մանիֆեստի խոստացած ազատութիւնները: Բայց կան մարդիկ, որոնք լաւ չըմբռնելով լրագրի շատ պարզ միտքը իրանց քէֆի ուզած եզրակացութիւններ են վերագրում լրագրին:

*

«Право» նոր լրագիրը, որի առաջին համարը հրատարակվեց յունվարի 9-ին, վերջին տարվայ հասարակական շարժման գումարն է տալիս: Լրագիրը գտնում է, որ «Ներկայ բոպէին ընդդիմադրական մակերևոյթը իջած է համեմատաբար այն տրամադրութեան հետ, որ կար հոկտեմբերին, երբ նա հասել էր իր գագաթնակէտին»: Հասարակութիւնը, որ համակրութեամբ վերաբերվեց բանւորների երևան գալուն յունվ. 9-ին և հոկտեմբերեան գործադուլին, որ աւեց հոկտ. 17-ի մանիֆեստը, դրանից յետոյ փոխեց իր վերաբերմունքը դէպի յետագայ յեղափոխական պայքարը:

Եւ դրա պատճառը շատ պարզ է: «Ժողովուրդը յոգնեց, կորցրեց հաւատը վաղվայ օրվայ մասին, երկիւղ կրեց, որ իր տնտեսական ամբողջ կեանքը կարող է անընդհատ կործանվել: Տրամադրութիւնը փոխվեց, առաջ եկաւ խիստ յեղաշրջութիւն և աւելի պարզ որոշվեց դժգոհութիւնը դէպի այսպէս կոչված «ծայրայեղ կուսակցութիւնները»:

Սակայն լրագրի կարծիքով ծայրայեղ կուսակցութիւնը չէին, որոնք ղեկավարվում էին շարժումը, այլ ընդհակառակը, նրանք-իրանք բռնվել էին այդ շարժման դարերականութեամբ և աւելի ենթարկվում էին մասսաներին, քան թէ իրանք էին կառավարում: Կռվելու միայն ամենադաժանական շարժման հետ, այն է հեռացնելով այն արգելքները, որոնք կարող են դարձնել նրան մի կատաղի հոսանք, որ կը սրբէ, կը տանէ իր ճանապարհի վրա ինչ որ կը հանդիպէ, միայն դրանով ազդեցութիւն գործել ծայրայեղ կուսակցութիւնների վրա: Իսկ այն երկպառակութիւնը, որ կայ այժմ հասարակութեան պրօգրէսիստ տարրերի մէջ, լրագիրը բացատրում է Վիտտէի անձնաւորութեամբ, որի անպրինցիպուլութիւնը նշանաւոր կերպով խանգեց թղթախաղը:

*

Պարիզում հրատարակվող «Պրօ Արմէնիա» լրագրի մէջ պ. Պիէր Քիյարդ «Հայերը և ռուս յեղափոխականութիւնը» վերնագրով մի յօդուածի մէջ առաջ է բերում Ռուսաստանի բալտիական նահանգների իր կալուածներից փախած իշխան Լիվէնի հետևեալ գրվածը:

«Այս բոլորի պատասխանատուութիւնը ծանրանում է ռուսական ներքին քաղաքականութեան վրա: Ջգտելով ռուսականացնել վարչութիւնը, արդարադատութիւնը և դպրոցը, ռուս կառավարութիւնը հասաւ այնտեղ, որ երկրի ազգութիւնները գնաց միմեանց դէմ ամեն տեղ: Թուրքերին գրգռեցին հայերի դէմ, ռուսներին հրէաների դէմ, լիտվացիներին՝ լեհերի դէմ, էստօնցիներին՝ գերմանացիների դէմ: Ռուս կառավարութիւնը սերմանեց ատելութիւն. նա յոյս ունէր օգուտ քաղել «բաժանիր, որ տիրես» սկզբունքից. նա հնձեց ատելութիւնը, բայց ոչ այնպէս, ինչպէս կարծում էր, որովհետև այն ատելութիւնը, որ նա գրգռեց, վերադարձաւ Ռուսաստանի և այն բոլորի դէմ, որ ռուսական է»:

Արդ, հարցնում է պ. Քիյարդ, ով է խօսում այսպէս. արդեօք մի հայ, մի յեղափոխական, մի հրեայ, մի օտար, ինչպէս գրում են ռուս նացիօնալիստ լրագիրները: Ամենևին ոչ. գրում է մի հաւատարիմ հպատակ, իշխան Լիվէնը, գերմանական ծագումից, որը վռնդվեց իր կալուածքներից յեղափոխութեան ձեռքով:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՋԻՒԱՆՇԻՐՈՒՄ

(Նամակ Ջիւանշիրի գաւառից)

Յունվարի 24-ին

Մեր գաւառի թուրքերը վերջ չեն տալիս իրանց դազանութիւններին և բարբարոսութիւններին. վերջ չեն տալիս նրա համար, որովհետև արգելող չը կայ… Եւ ովքեր պէտք է նրանց արգելէին՝ Տակայշվիլիները, թէ Բաննիկօֆները թէ Ֆատալիբէկօֆները և թէ ուրիշները… Իսկ ներկայումս մեր գաւառը անտէր է. անտէր է, որովհետև ոստիկանութիւն չէ երևում. միայն մի համակրելի պրիստաւ (պ. Դաւթեան) ունէինք, այն էլ լսում ենք, որ տեղափոխում են: Ինչպէս երևում է Ջիւանշիրի գաւառական ադմինիստրացիան դեռ զբաղված է թամաշայով արիւնահեղ դէպքերին և կատարվելիք դրամաներին. միայն նոր նշանակված գաւառապետ Պիվօվարօվը—ժամանակ-ժամանակ Ղարաբաղի խանզադաների փայտօններում նստած շրջում է գաւառի թուրքաբնակ գիւղերը և այն տեղերում հիւր է ընկնում խանզադաների տներում ու ժպիտը երեսին և սիրալիր դէմքով սեղմում հրոսակախմբերի գլխաւորների, հայերի դահիճների, թուրք բէգերի ձեռքերը, թէկուզ էլ իր բէգլէրնշլայի քթի տակ թուրքերը պատերազմ են մղում սարօվցիների, մարաղեցիների, չայլուեցիների, սովխւանցիների և ուրիշ հայերի հետ:

Երկար, հերոսաբար թշնամուն դիմադրելուց յետոյ, տեղափոխվեց Ջիվանշիրի տափարակում գտնվող Սովխւան գիւղը—Մարգակերթ և Մեծ-Սարովը, Հասան-Ղայան, Ղահրիլարը, Մարալեանը Թալիշ և Ղարաչայ կէտի վրա գտնվող հայաբնակ գիւղերը՝ Ենգիքենդը կամ Մանասինէնը,—Ղարաչինարը և Աղջաղալան, Խարխափուրը, Ներքի-Շէնը և Վերի-Շէնը: Ուրեմն Ջիւանշիրի տափարակում գտնվող հայերը տեղափոխվել են լեռնային հայաբնակ գիւղերը: Այժմ թուրքերը մտադիր են յարձակվելու լեռնային հայաբնակ գիւղերի վրա և ոչնչացնելու նրանց. օրինակ նրանք (թուրքերը) մի քանի անգամ գիշեր ժամանակ փորձ են արել յարձակվելու Հայալդ և Առաջաձոր գիւղերի վրա, բայց անաջող է անցել նրանց համար. այս օրերս էլ, դեկտեմբերի (անցեալ 1905 թ.) 30-ին, անթիւ թուրքերից կազմված մի խուժան (հաւաքված Սափրավանդից, Շիխավենդից, Ղարաքիրումից և ուրիշ թուրք գիւղօրայքից) յարձակվում է Չընգաթաղ կամ Ջանիսաթաղ հայաբնակ գիւղի վրա, (գտնվելով Առաջաձորից մօտաւորապէս 20 վերստ հեռաւորութեան վրա) և երբ այդ խուժանը մօտենում է գիւղին, խուժանի մէջ գտնվող մօլլան, Ղուրանը ձեռքին, սկսում է բարձր ձայնով կանչել «ազանը», որ դրանով այդ թուրք հոգևորականը կամ ոգևորում է խուժանին հերոսաբար կռւելու և կամ նշան է տալիս՝ կռիւը սկսելու: Բայց ի զուր՝ երբ հայ քաջերը բակում են դիմադրել թշնամուն և կոտորել նրանցից մինչև տասը հոգի, այն ժամանակ անթիւ թուրքերը փախչում են, մօլլան էլ Ղուրանը մոռացած, ազանը ու քարոզը կիսատ բերանին մնացած ու կարկատանման վերաբկուն քաշ տալով նրանց յետեւից: Կռուի հրացանաձգութիւնը լսելով, տեղի պրիստաւ Դաւթեանը, օֆիցէր Պաւլինը կօզակներով գալիս են կռուի տեղը այն ժամանակ, երբ թուրքերը փախչելիս են լինում: Թէ պրիստաւը, թէ օֆիցէրը, թէ գաւառապետ Պիլօսարովը ու թէ բոլորը շատ լաւ իմանում են այդ թուրքերի ով լինելը ու ինչ լինելը, բայց չը նայած դրան՝ էլի մեղաւորները մնում են անպատիժ ու պատճառը այդ է, որ շարունակվում են անօգուտ և անպատասխան ընդհարումները:

Ինչպէս Սարխաւլենդի, Չրագլուի և ուրիշ գիւղերի թուրքերը իրանց գազանութիւնների պատճառով իրանք իրանց ձեռքով իրանց գլուխները կերան, իրանց տները իրանց ձեռքով քանդեցին, այնպէս էլ Ջանիաթաղի վրա յարձակվողներն ուզում են իրանց գլուխները ուտել. չէ՞ որ հայերն էլ են մարդ, մինչև նրանք չեն լռի և վերջապէս նրանց համբերութեան բաժակն էլ կը լցվի և մի անգամ էլ հայ կարիճները, հերոսները կը յարձակվեն Ջինգաթափի վրա, յարձակվողների վրա և կը ուտեն նրանց գիւղօրայքը, ինչպէս Սարխաւլենդը, Չրագլուն, Ամայիլ-Բեկլուն, Ջաւադապալուն և այլն: Հայերը նոր են հասկացել, որ իրանց պաշտպանողը, իրանց փրկողը միայն զէնքն է, միայն իրանք են: Ուրեմն հարկաւոր է ինքնապաշտպանութիւն և ինքնապաշտպանութեան համար լաւ գործիքներ, իսկ եթէ հայը այդ իմանար մի քանի տարի սրանից առաջ, եթէ նա չը հուսար իր հարեւանի կեղծ խօսքերին, եթէ հայը յոյսը ուրիշների վրա չը դնէր... իրան ապահով չը համարէր, և գլխաւորը եթէ նրան չը խանգարէին զինվելու, այն ժամանակ մի քանի տեղեր հայերը չէին տուժի...:

Այս տարի գիւղացի հայերը ոչ մի աշխատանք չունեն, նրանք տանը նստած, տան միացած աղջկայ նման, միայն թշնամուն են սպասում և ուրեմն դրանց սպառնում է սով: Լեռնային տեղերում ընդհանրապէս հացը սակաւ է լինում, և Բագւում ու ուրիշ տեղերում էլ աշխատողներ չունեն, որ նրանց ղրկած փողով հաց գնեն, գիւղումն էլ աշխատանք չը կայ, գիւղի վարպետները պարապ են մնացած, որովհետև պատրաստած իրերը չեն ծախւում: Գիւղի երիտասարդները ուրիշ տեղեր աշխատանքի չեն գնում, որովհետև մի կողմից ուրիշ տեղերն էլ են անապահով, միւս կողմից էլ ճանապարհներն են անապահով ու երրորդը՝ նրանք վստահանալ չեն կարող իրանց ծնողներին, եղբայրներին, քոյրերին ու բարեկամներին թողնելու թշնամու տրամադրութեան տակ. նրանք մնում են հայրենի գիւղում, իրանց ծննդավայրում, թէկուզ էլ քաղցած լինեն, թշնամուն ջարդ տալու, ինչպէս շատ տեղեր են ջարդ տուել: Սակայն ինչո՞ւ են լռել գիւղացի, բայց քաղաքներում ապրող ունևոր հայերը և ինչո՞ւ չեն օգնութեան հասնում նրանց, իրանց ծննդավայրում թողած հայ եղբայրներին. միթէ՞ սրանից էլ դառն ժամանակ կը լինի. ինչի և ո՞ր օրվայ համար են պինդ պահպանում իրանց դրամագլուխները, քանի որ ազգը վտանգի մէջ է: Պարտք եմ համարում սրանով յայտարարելու առաջնորդի, Բագւում ապրող Աղաբէգ Յովհաննիսեան Կարապետեանցի բարերարութիւնը, որը իմանալով իր համագիւղացիների նեղ դրութեան մասին, նամակով խոստացել է՝ ուղարկել նրանց համար հինգ հարիւր (500 ր.) րուբլի՝ հաց գնելու: Եւ այդ առաջին բարեգործութիւնը չէ Կարապետեանցի կողմից: Սակայն ափսոս որ Կարապետեանցը հետևողներ չունի, չը նայած որ նրանցից ոչ պակաս ունևոր մարդիկ շատ կան քաղաքներում ապրող:

Այժմ լսում ենք, որ գարնան սկզբներին թուրքերը մտադիր են կռիւ մղելու Թաշկնի հովտում ապրող հայերի հետ՝ իրանց համար ճանապարհ բանալու՝ սար բարձրանալու համար (Թաշկնի ձորակով գարնանը մեծ թիւով թուրքեր են բարձրանում սարերը): Հարցնող չը կայ այդ թուրքերին, եթէ իրանց ճանապարհ է հարկաւոր, միթէ հայերին ճանապարհ չէ հարկաւոր: Ինչո՞ւ իրանք ճանապարհ չեն տալիս հայերին Աղդամից մինչև Եւլախ. և Ջէբրայէլի, Ջանգեզուրի, Շուշու և Ջիւանշիրի հայերը մեծ նեղութիւններով, սարերով, ձորերով և անտառներով են գնում Գանձակ և այնտեղից երկաթուղով ուրիշ քաղաքներ: Թուրքերը հայերի մի օրվայ ճանապարհը շինել են համարեա տասը օրվայ ճանապարհ, այն էլ նեղութիւններով...:

Հայերը տեսնելով Ջինգիլամի և Լէնկթեմուրի ցեղակիցների այդպիսի գազանութիւնները, իրանք էլ կտրել են Աղդամի վերևում գտնվող Ասկարանը (որտեղ հայ կարիճները քաջ Համազասպի առաջնորդութեամբ, Շուշու ցաւալի դէպքերի ժամանակ, քաջաբար ու հերոսաբար դիմադրել են Աղդամից բարձրացող թուրք խուժանին, բաւականին կոտորելով, չեն թողել նրանց առաջ գնալու ու Շուշին աւերելու) և արգելել թուրքերին Շուշի գնալու: Այդպիսով հայ գիւղերով Շուշու քաղաքի հայ բնակիչներին հաց էր հասնում, իսկ նոյն քաղաքում ապրող թուրքերը քիչ էր մնացել, որ սովից կոտորվէին: Այդ տեսնելով, թուրքերը իսկոյն ամեն կողմից բողոք բարձրացրին իշխանութեան առաջ, թէ հայերը կտրել են իրանց ճանապարհը և Շուշու թուրքերը մնացել են քաղցած: Այդ թուրքերը իրանց եօթ ամսվայ արածները աչքի առաջ չեն ունենում, իսկ հայերի մի շաբաթվայ արածին չեն դիմանում: Այդ մասին բողոք յայտնող թուրքերի խնդիրն էլ շուտ լսվեց. արտիլէրիան թնդանօթներով եկաւ Ասկարան օրերս, և հայերին արգելեց՝ թուրքերի ճանապարհը կտրելու: Ա՛խ, երբ կլինի, որ մի անգամ էլ մեր բողոքը լսվի և գոնէ մեզ համար Աղդամից մինչ Եւլախ ճանապարհ բացվի:

Լսում ենք, որ Պարսկաստանից շատ թուրքեր են անցել և օրերս յարձակվել Շուշու գաւառում գտնւող Նախիջևանիկ, Ֆիրշամալու, Վարազաբուն և այլ գիւղերի վրա: Ինչպէս պատմում են, այդ խուժանը մինչև հայ կարիճների հասնելը, կոտորել է հայերից մինչև 15 հոգի՝ անմեղ երեխաներին, կանանց, բայց երբ սուրհանդակը յայտնում է այդ մասին Թուլիկ խմբերին, այն ժամանակ հայ կարիճները հասնում են վտանգի սպառնող տեղերը ու մտնելով գիւղերը, կոտորում բաւականին թշնամիներ ու մնացածին քշքշարար յետ մղում:

Աւելորդ չեմ համարում այստեղ յայտնել այն բանի մասին, որ չը նայած—թուրքերի անազնւութիւններին, օրինակ, Մինքենդի դէպքերին, այնուամենայնիւ Առաջաձոր գիւղի մօտ 300 տնից բաղկացած հայերը մինչև այսօր իրանց մէջ ապահով պահպանում են 15 տուն «Ղարալար» անուանված թուրքերին, բայց ինչ արած, որ կրկին հայերն են մեղաւոր դուրս գալիս...

Բ. Զաքարեան

ԿԱՐԻՔԸ ՆՈՒԽՈՒ ԵՒ ԱՐԷՇԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Յունվարի 19-ին

Անցեալ անգամ խոստացայ գրել թէ Արէշի վեց հայ գիւղացիները, որոնք Մայրլուի աւերումից յետոյ փախել ապաստան են գտել Ղայաքաշի և ուրիշ գիւղերում, որչափ օգնութիւն են ստացել:

Սկզբում յիշեալ բոլոր գիւղացիները, թւով մօտ երեք հազար հոգի, տեղաւորվում են Ղայաքաշում: Ղայաքաշցիք կարեկցաբար ընդունում են դրանց, տեղաւորում, խնամակալներին կերակրում, նրանց մխիթարում, խրախուսում, հաց ու մթերք չունեցողներին բաւականութիւն տալիս: Այդ միջոցին գործադուլի պատճառով թէյ ու շաքար սաստիկ թանգացել էին քաղաքում, իսկ Ղայաքաշ այդ տեսակ բաներ, երկիւղի ու թանգութեան պատճառով, տանող չը կար, ուստի քաղաքից թէյ ու շաքար ուղարկվեց Ղայաքաշ: Մի քանի տիկիններ, օրիորդներ ու պարոններ սկսեցին փող ու հագուստեղէն հաւաքել: Ժողոված փողերով անմիջապէս գնվեցին և ուղարկվեցին 60 հատ թեթևակայ վառարաններ, որոնց մեծ կարիք կար, որովհետև մարդկանցից շատերը նկուղներում, գոմերում և առանց սովորական բուխարի (պատի մէջ վառարան) ունեցած սենեակների մէջ էին տեղաւորված:

Վիճակիս փոխանորդի կարգադրութեամբ Ղայաքաշում մի նպաստամատոյց յանձնաժողով կազմվեց, որ Նուխուց (միմիայն Նուխուց, որովհետև երթևեկութիւն չը լինելու պատճառով ուրիշ տեղերից նպաստ չէր ստացվում) ուղարկված իրերը բաշխում էր աղքատ արէշցիներին: Քաղաքից մի քանի անգամ հագուստեղէն և վաճառականներից ստացված ճոթեր ուղարկվեցին, բայց փող, որ աւելի հարկաւոր էր, շատ քիչ հաւաքվեց. եղածի մեծագոյն մասն էլ ապուրցի վաճառականներն էին տուել, որոնք, պէտք է խոստովանել, ամեն ժամանակ և ամեն մի դէպքում յայտնի են իրանց առատաձեռնութեամբ և մարդասէր վարմունքով: Թէև բուն նուխեցիները ընդհանրապէս չքաւոր մարդիկ են, բայց և այնպէս իրանց կարողութեան չափով ներկայ աղէտի օրերում իրանց հարազատ հարևանների արէշցի եղբայրների համար շատ քիչ բաժին հանեցին: Այն մարդը, որը կարող էր հեշտութեամբ 10 ր. տալ, առանց խղճահարվելու տաս կոպէկ էր առաջարկում, որպիսի վարմունքը, եթէ աւելին չասենք, պախարակելի է:

Արէշցի գաղթականները մի առ ժամանակ մնալով Ղայաքաշում և տեսնելով, որ Նուխուց հասած չնչին նպաստներով չեն կարող ապրել այս ցուրտ ձմեռվայ օրերին, սկսում են դուրս գալ Ղայաքաշից և ցրվել շրջակայ Մեծլիս, Չայքենդ, Սարաթլու, Ղօղլու, Ջառափ, Թոփեր, Սեօյիթլու, Եաղարլու և այլ գիւղեր, յուսալով այդ գիւղացիների մարդասիրութեան վրա, սակայն, ցաւելով պէտք է նկատենք, որ յիշեալ գիւղացիներն էլ բաւականացել են միմիայն բնակարան տալով, իսկ ցամաք հացը մինչև այժմ խեղճերը դռնեդուռ ընկած մուրալով ձեռք են բերում կամ չնչին գնով վաճառում են իրանց ունեցած անասունները (ով ունի) հաց ձեռք բերելու համար: Եղել են և այսպիսի դէպքեր. գաղթականը ունի երկու կով, բայց դրանց պահելու համար, ուտացնելու համար ոչինչ չունի. բնակարան տուող տէր գիւղացին խոստանում էր կեր տալ և պահել կովերը մինչև գարուն այն պայմանով, որ գարնան կովերից մէկը մնայ իր սեփականութիւն: Լսելով այսպիսի բաներ, Նուխու երիտասարդութիւնը (դաշնակցականները) շրջաբերական գրութիւններով ազդարարում են գիւղերի երիտասարդութեան առաջն առնել այդպիսի անպատուաբեր արարքների և հանգանակութիւն սկսել գիւղերում գաղթականների համար, որն ունեցել է լաւ հետեւանք. այն է, այժմ համարեա բոլոր գիւղերում գաղթականների օգտին ցորեն, ալիւր և այլ մթերքներ են ժողովվում:

Գործադուլից յետոյ փոխանորդ Եղիշէ վարդապետը բացի գաղթական պաշտօնական անձերի տեղեկատու հեռագիրներ խփելուց, մի հեռագրով էլ դիմում է Թիֆլիսի առաջնորդ Սաթունեան արքեպիսկոպոսին և նպաստ խնդրում: Առաջնորդը անմիջապէս փոխադրում է 1200 ր.: Այդ գումարը ստանալուց յետոյ քաղաքիս հասարակութիւնը մի քանի հոգուց բաղկացած մի յանձնաժողով է ընտրում: Մի քանի օր առաջ յանձնաժողովի անդամները, իրանց հետ ունենալով Արէշի գործակալին, շրջում են գաղթականներ գտնվող գիւղերը, նրանց կարիքների մասին ճիշտ տեղեկութիւն իմանալու և վերադառնում են: Սրանցից յետոյ քաղաքիս երկսեռ դպրոցների հոգաբարձուները պ. Ա. Նասիբեանց մի ընկերի հետ ամսիս 18-ին գնում է Սարաթլու գիւղը աղքատաւորների համար ցորեն ժողովելու կամ եթէ ժողոված կայ, ծախելու կամ Ղայաքաշ փոխադրել տալու: Ի դէպ. նորընտիր նպաստամատոյց յանձնաժողովին խոստացել են աջակցել մեր դպրոցների հոգաբարձուները:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, մինչև այսօր Արէշի աղէտաւորների համար մի աչքի ընկնող բան արված չէ, նրանց սոսկալի դրութիւնը այս ձմեռվայ օրերին տանելի դարձած չէ: Տեսնենք ինչ կանեն մեր յիշեալ յանձնաժողովի երիտասարդ անդամները: Դիտմամբ հասարակութիւնն այս անգամ ջահէլներից ընտրեց յանձնաժողովի անդամներ: Մինչև այժմ հասարակական գործերը վարելու համար ընտրվում էին որոշ մարդիկ հասակաւոր իշխաններից, իսկ ջահէլները հեռուից միայն քննադատել գիտէին...:

Պ. Զուռ

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Պետերբուրգում կազմվեց մի նոր կուսակցութիւն «Դէմօկրատական ռեֆօրմներ» անունով, որը ուշադրութիւն է գրաւում թէ իր ծրագրի բովանդակութեամբ և թէ իր կոմպետենտ անդամների կազմով: Այդ կուսակցութեան կոմիտէտի կազմի մէջ մտել են՝ Կ. Արսէնիով, պրոֆեսոր Լ. Պ. Բօկլեվսկի, պրոֆ. Ա. Գ. Գուսակով, պրոֆ. Ի. Ի. Իվանիւկով, պրոֆ. Վ. Դ. Կուզմին—Կարաւաեւ, պրոֆ. Ն. Ա. Մէնշուտկին, պրոֆ. Մ. Ի. Նօսաչ, պրոֆ. Ա. Ս. Պօսնիկով, Դ. Վ. Ստասով և Մ. Մ. Ստասիւլեւիչ: Կուսակցութիւնը մշակել է մի կոչ, որը բացատրում է կուսակցութեան նպատակները, նրա ծրագիրը և տակտիկական միջոցները:

Կուսակցութեան ծրագիրը մօտ է սահմանադրական-դէմօկրատական կուսակցութեան ծրագրին: «Դէմօկրատական ռեֆօրմների» կուսակցութիւնը իր կոչի վերջաբանութեան մէջ ասում է հետևեալը.

«Համոզված լինելով, որ երկիրը հանդարտեցնելու միակ միջոցը ժողովրդական ներկայացուցչութեան ըստ կարելոյն շուտափոյթ իրագործումն է, մենք անյապաղ պատասխանում ենք թէ սիստեմական խուսափումն Պետական Դումայի համար ընտրութիւններին մասնակցելուց, և թէ այն ամենը, ինչ որ նպատակ ունի խանգարելու նրա գումարումը կամ նրա գործունէութեան սկսումը: Ընդունելով, որ Պետական Դումային պէտք է պատկանեն լայն օրէնսդիր ֆունկցիաներ, մենք պատճառներ չենք տեսնում պահանջելու, որ Պետական Դուման փոխարինվի սահմանադիր ժողովով: Մենք հնարաւոր չենք տեսնում որոշելու այժմ և եթ թէ ինչ հարցերով և թէ ինչ ժամանակամիջոցով պէտք է սահմանափակվի Պետական Դումայի գործունէութիւնը, բայց գտնում ենք, որ նա յամենայն դէպս պարտաւոր է զբաղվելու այնպիսի հարցով, որպէս ագրարային հարցն է: Մենք բողոքում ենք անձնական ազատութիւնը և անձնական իրաւունքները ճնշելու ամեն ձևի դէմ, որտեղից էլ նրանք բղխէին: Անզէն հակառակորդի վրա ծանրացած արագակարգ ճնշումները մենք համարում ենք անթոյլատրելի և յանցաւոր իշխանազանցութիւն: Մենք ընդունում ենք, որ խռովութիւնը թէկուզ մասնակի վերադարձնումը դէպի անյապաղ դատապարտված անցեալը՝ սպառնում է ամենամեծ վտանգ թէ ժողովրդին և թէ պետութեանը: Մենք ցանկանում ենք, որ դադարի ներկայ խառն դրութիւնը և սկսվի, հասարակութեան և ժողովրդի մասնակցութեամբ, սահմանադրական աշխատանքի շրջան՝ մեր պետական հասարակարգի ամբողջ համակարգի ընդարձակ ռեֆօրմների համար»: (Ռ. Վ.):

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Յունվարի 12-ին Տէնիշեւեան դպրոցի դահլիճում բացվեց Ռուսաստանի առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների համաժողովը: Համաժողովը հրաւիրված է գլխաւորապէս այդ մասնաւոր հիմնարկութիւններից դաշնակցութիւն կազմելու համար. գրվել են մօտ 200 և առաջին նիստին ներկայ էին մինչև 125 ներկայացուցիչներ՝ արդիւնաբերական, առևտրական, կրեդիտային, փոխադրական և ապահովագրական խմբակցութիւններից: Համաժողովի նպատակն է,—«Молва» լրագրի խօսքով, կազմել առևտրա-արդիւնաբերական դասակարգի միացեալ կազմակերպութիւններ, որոնց նպատակը լինի պէտք է քննել կեանքի առաջ բերած բոլոր հարցերը և պարզել հասարակական կարծիքին նրանց նշանակութիւնը և ներկայացնել իրանց պահանջները կառավարութեանը: Բանալով ժողովը, նախագիծը մշակող դաշնակցութեան կոմիտէտի նախագահ Մ. Նօբէլ յիշեցրեց ժողովին, որ դաշնակցութեան նպատակն է համախմբվել տնտեսական հողի վրա: Պրոֆեսոր Ի. Իվանիւկով զեկուցում կարդաց առևտրական և արդիւնաբերական կազմակերպութիւնների դերի և նշանակութեան մասին երկրի տնտեսական կեանքի զարգացման մէջ: Նա ապացուցանում էր, որ նրանց ասպարէզ գալը սովորական նշան է համարվում այն բանի, որ առևտուրը և արդիւնաբերութիւնը երկրի մէջ հասել են յայտնի բարձրութեան: Եւրոպայում նրանք վաղուց գոյութիւն ունեն, մեզանում նա դեռ նոր է երևան գալիս:

Դրանից յետոյ խօսեց պ. Նէմիրօվսկին: Դաշնակցութիւնները, նրա խօսքով, անհրաժեշտ են ոչ միայն մի որոշ պրոֆեսիային պատկանող անձանց շահերը միացնելու համար, այլ և երկիրը ամեն կողմից ուսումնասիրելու համար: Եւ օտարազգիները ուսումնասիրում և մանրակրկիտ կերպով կշռում են Ռուսաստանի արդիւնաբերական ոյժերը, բայց այդ բանն անում են նրանք, որպէս մեր պարտատէրեր: Ապա բերելով բազմաթիւ ցիտատներ գերմանական նշանաւոր քաղաքատնտեսների գրուածքներից Ռուսաստանի մասին, որոնք ապացուցանում են, որ նա (Ռուսաստանը) չէ կարող դիմանալ երկու միլլիարդային բիւջէտին, որից աւելի քան ութերորդ մասը գնում է պետական պարտքերի վճարման և հանգցման վրա. յետոյ այն եզրակացութեան է գալիս, որ միակ փրկութիւնը Ռուսաստանին սպառնացող սնանկութիւնից հէնց մեր մէջ է և ամբողջ ժողովրդի մէջն է: Ճիշտ է, երկիրը սնանկացած է: Ճիշտ է, որ դեռ շուտ չեն սկսվի ծաղկել արդիւնաբերութիւնը և առևտուրը երկրի մէջ, որովհետև ժողովրդի մէջ չը կայ ոչ գիտութիւն, ոչ կուլտուրա, ոչ էլ դրա համար անհրաժեշտ նիւթական միջոցներ: Սակայն թող միայն փոխվի վարչութեան սիստեմը և այն ժամանակ բոլոր պետութիւնները կը զարմանան ռուս մարդու կենսունակութեան և ոյժի վրա: Թող միայն դադարի թագաւորել պօլիցիական ռեժիմը, և ռուս կեանքը կը ծաղկի շքեղ կերպով: Հարկաւոր է հաւատ դէպի ժողովուրդը և միութիւնը: Վերջինումն է մեր փրկութիւնը:

Ապա համաժողովը անցաւ դաշնակցութեան նախագծի քննութեանը: Սակայն այդտեղ հէնց առաջին քայլափոխում երևան եկան նախագիծը կազմողների ընդհանուր շահերի անհասանելիութիւնը և անհամաձայնութիւնը: Ուրալի լեռնարդիւնաբերողների համաժողովի ներկայացուցիչը ասեց թէ առաջարկվում է մի նոր բիւրօկրատական մինիստրութիւն ստեղծել, որը հաստատ Պետերբուրգում «ուղղութիւն» կը տայ Ռուսաստանի ամբողջ արդիւնաբերութեանը և առևտրին: Նախագծված կազմակերպութիւնները աչքի են ընկնում իրանց բարդութեամբ և անշարժութեամբ:

Կ. Նասիմինսկի Մոսկվայի ամենախոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւնների կողմից մատնացոյց էր անում թէ անհրաժեշտ է այժմ և եթ ստեղծել առևտրական պալատներ Ռուսաստանի գոնէ 13 շրջաններում, որոնք պէտք է ղեկավարեն տեղական շահերը և պաշտպանեն նրանց: Մի ուրիշ ներկայացուցիչ ապացուցանում էր թէ արդիւնաբերութիւնը տեղական հասարակական գործիչների կարիք ունի արդիւնաբերական ոյժերը զարգացնելու համար:—Չէ կարելի, ասում էր նա, նստել Պետերբուրգում, էլէկտրական կոճակները սեղմել և դրանցով հրամաններ արձակել: Նոյն մտքով էին խօսում և այլ արդիւնաբերական շրջանների ներկայացուցիչները:

Ի նկատի ունենալով ընդհանուր դժգոհութիւնը նախագծից, վճռվեց յանձնաժողով կազմել բիւրօի անդամներից և այն հռետորներից որոնք կարծիքներ յայտնեցին դրա դէմ և յանձնել նրան նոր սկզբունքներով կազմելու նախագիծը:

ԵՐԳՉՈՒՀԻ ՕՐԻՈՐԴ ՊԱՊԱՅԵԱՆ

Տաղանդաւոր հայ երգչուհի Պապայեանը վախճանվեց Աստրախանում:

Նրա մահը անսպասելի էր: Նա զոհ դարձաւ մի դժբաղդ յարձակման, որի ժամանակ նա ստացաւ մահացու վէրքեր:

Պապայեանի ձայնը իր զարգացման ամենայաջող շրջանումն էր: Նա կատարելագործել էր իր երգը՝ հասցնելով վերին աստիճանի մշակութեան: Ախորժելի տեմբրը, ճաշակով երգեցողութիւնը, մաքուր խաղը, փափկիկ և քնքոյշ նիւանսները առ միշտ անմոռանալի կը մնան այն բոլոր անձանց յիշողութեան մէջ, որոնք լսել են տաղանդաւոր երգչուհու ձայնը:

Մեզ հայերիս համար նա բացի այդ, ունէր նշանակութիւն, իբրև ապացոյց, որ հայուհիների մէջ կարող են լինել երգեցողութեան տաղանդներ եւրոպական մտքով: Եւ օրիորդ Պապայեանը իսկապէս արուեստասէր էր, նուիրված իր գործին:

Մասնաւոր զգալի է նրա մահը թիֆլիսցիների համար, որովհետև իր երգչական գործունէութեան ամենամեծ մասը նա անց է կացրել Թիֆլիսում:

Եւ մենք այստեղ, տարիների ընթացքում լսելով Պապայեանին, տեսել ենք նրա տաղանդի զարգացումը և ամրացումը:

Նա աչքի էր ընկնում Չայկովսկու «Պիկօվայա դամա», «Եվգենի Օնէգին» և «Ռօմէօ» Գունոյի «Ֆաուստ», Վերդիի «Տրավիատա» և «Ռիգօլէտտօ», Մասկանիի «Գիւղական պատիւ», Պուչչինիի «Բօհեմա», Ռիմսկի-Կորսակովի «Արքայական հարսը» և ուրիշ օպերաներում:

Պապայեանի մահը զգալի կորուստ է օպերայի բեմի համար:

Միրոզ

ՀԻՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Նամակ Բաթումից)

Յունվարի 15-ին

Վերջապէս այստեղ էլ վերջ արվեց պօստ-հեռագրական և երկաթուղիների գործադուլին: Զարմանալի բան է ժողովրդի հոգեբանութիւնը. որքան և ծանր լինէին այդ բոլորը, այսինքն պօստ-հեռագրական և երկաթուղիների գործադուլները, ուրեմն, և հաղորդակցութեան ընդհանուր դադարումը, բայց և այնպէս վերջին ժամանակներս այդ բոլորը կարծես թէ այլ ևս այնպէս չէին ներգործում ժողովրդի վրա, ինչպէս որ այդ տեղի էր ունենում առաջ:

Եւ ներկայումս ժողովրդի գրեթէ մեծ մասը այդպէս է. նա հաց չունի ուտելու բառի բուն նշանակութեամբ, կրակ չունի վառելու այս սոսկալի ցրտերին, բայց և այնպէս, ընտելանալով այդ բոլորին, նա մի կերպ եօլայ է գնում և այդ բոլորից յետոյ դեռ ուրախանում, կեանք և կենդանութիւն է ցոյց տալիս, երբ ապագայի յուսով այս կամ այն ձևով շարժում և գործունէութիւն է տեղի ունենում:

Իդէալի իրականացման միակ և ամենամեծ յոյսը դրա մէջ է կայանում. եթէ մարդկութիւնը զուրկ լինէր այդ վեհ յատկութիւնից, այն ժամանակ երևի չէր էլ կարող գոյութիւն առնել իդէալը—մարդկային կեանքը բարեփոխող և մարդավայել տարածող իդէալը... Այո, անշուշտ այդ էր պատճառը, որ մի ժամանակ ամեն բանից խրտնող և ամեն մի գործադուլ՝ վտանգաւոր համարող հասարակութիւնը վերջերս սկսել էր ոչ միայն ընտելանալ և սրտով մասնակցել գործին, այլ և շատ քիչ էր համարում այն ամենը, ինչ որ գործադրվում էր իր ապագան բարելաւելու և վերականգնելու իր քաղաքացիական իրաւունքները:

Եւ ահա ժողովրդի այդ ընդհանուր և բուռն պահանջը ոչ միայն վտանգ է սպառնում ռուսաց բիւրօկրատիայի տապալման, առաւել էր ազդում նաև հարևան միապետի գահին—Սուլթան-Համիդի կառավարչական սիստեմին:

Ինչպէս անցած դեկտեմբեր ամսվայ վերջերին արտասահմանից եկած ճամբորդները պատմում էին, վերջին ժամանակներս այս կողմերից, այսինքն Ռուսաստանից դէպի Թիւրքիա գնացողներից—հայեր չկարծէք, թուրքեր, յոյներ և այլն—շատերը չէին արժանացել իրանց հայրենիք հասնելուն, այսինքն Թիւրքաց սահմաններում դուրս գալուն, այլ մնացել էին շոգենաւերի վրա և դուրս էին թողել նրանց միայն, որոնք կարողացել էին վկայութիւններ ներկայացնել, որ իրանք «անկեղծ և հաւատարիմ հպատակներ են Սուլթանի կառավարութեան»:

Մենք, ի հարկէ, մի առ ժամանակ կասկածանքով էինք վերաբերվում դէպի այդ լուրի ճիշտ լինելը, բայց երբ տեղիս Թիւրքաց հիւպատոսի կողմից իր կառավարութեան ուղարկած մի տարօրինակ հաղորդագրութեան պատճառով հէնց երկու մարդատար շոգենաւեր յայտնվեցին այստեղ և հիւպատոսը կանչեց բոլոր Թիւրքահպատակներին—թուրքերին և յոյներին և մօլլայի ու յոյն քահանայի միջնորդով երկար երդում տալ տուեց նրանց (դեկտեմբերի 25-ին,) որ նրանք հաւատարիմ հպատակներ են Սուլթանի կառավարութեան և ապա նոր միայն առաջարկեց, որ ցանկացողները կարող են ազատ կերպով վերադառնալ հայրենիք,—այդտեղ արդէն փարատվեց մեր կասկածը: Անկասկած է, որ նոյնը տեղի կունենար նաև ծովեզրեայ միւս քաղաքներում, ուր յիշեալ երկու շոգենաւերը շրջելով, բաւական ճանապարհորդներ ժողովեցին ու յետ դարձան իրանց երկիրը:

Գալով այդ շոգենաւերը այս կողմերը ուղարկելու պատճառներին, այդ մասին թարգմանօրէն մէջ ենք բերում ահա «Чер. Вѣст.» № 196. (1905 թ.) տպված մի յօդուածը ամբողջովին: Ահա նա. «Մինչև այժմ, սիրելի ընթերցող, կռւում էինք միայն մեր հայրենիքի պրովօկատորների դէմ, իսկ այժմ, ինչպէս կը տեսնենք հետևեալ փաստերից, ստիպված ենք կռւելու նաև արտասահմանեան պրովօկացիայի դէմ: Բայց կը հասնի արդեօք իր նպատակին այդ կռիւը ներկայ մեր պօստ-հեռագրական աննորմալ պայմաններում,—հարցնէ թէ: Մինչև մենք հերքումներ կուղարկենք այս կամ այն կենտրոնները, կազմակերպված պրովօկացիան արդէն իր գործը կատարել է: Ի՞նչ օգուտ, եթէ մենք մի ամսից յետոյ հերքենք մի որև է քամինկլի զրոյց, մինչդեռ նա արդէն հասել է իր նպատակին: Ընթերցողները անշուշտ յիշում են Թիֆլիսի թուրքական կոնսուլի «Возрожденіе» թերթում տպագրած յայտարարութիւնը, որով հիւպատոսը զգուշացնում էր հայերին, որ եթէ թէկուզ մէկ հատ թուրք մեռնի հայ-թուրքական ընդհարումներից, նա, հիւպատոսը, չէ երաշխաւորում Թիւրքիայի հայերի ապահովութեան համար: Այս յայտարարութիւնը, որը ընդունվեց որպէս սպառնական հրաւէրանք, խուճապ առաջ բերեց Թիւրքիայի հայերի մէջ, թէպէտ և շնորհիւ եւրոպական պետութիւնների աչալրջութեան, ոչինչ էլ չը պատահեց: Ինձ համար, որպէս դիպլօմատիական գործերից բոլորովին անտեղեակի, մնացել էր անըմբռնելի մի հարց, թէ ինչը դրդեց պ. հիւպատոսին յանկարծակի անհանգստանալ Թիւրքիայի հայերի հանգստութեան համար, երբ որ Թիֆլիսում հազիւ թէ գտնվում են մի-երկու տասնեակ թուրքեր: Անշուշտ պ. հիւպատոսը չէր կարող չիմանալ, որ հայերը իրանց պաշտպանում են կեանքը և գոյքը ոչ միայն ուրիշ ազգութիւնների, այլ մինչև անգամ և խաղաղ թաթարներինը. հետևաբար ինչ կարիք կար վերոգրեալ յայտարարութեան:

Այժմ այդ խորհրդաւոր հարցը պարզվեց, երբ որ ես ստացայ արտասահմանեան թերթեր:

Վերցնում եմ «Le Matin»-ի № 7965-ը և կարդում եմ. «Պօլիս, 14 դեկտեմբերի. համաձայն Թիֆլիսից ստացված հեռագրի, վերջին օրերս հայերի և թուրքերի մէջ տեղի են ունեցել սոսկալի ընդհարումներ. կառավարութիւնը զէնք է բաժանում կազմակերպութիւններին և հայերին և օգնում է կոտորելու մուսուլմաններին: Հայերը անարգել ներս են խուժում տները և անխնայ կոտորում են կանանց և երեխաներին. կառավարութիւնը ուշադրութիւն չը դարձրեց Թիւրքական հիւպատոսի բողոքներին: Թիֆլիսում շատ թիւրքահպատակ թիւրքեր վիճակակից են լինում թաթարներին, իրանց հաւատակիցներին: Ասում են, որ զօրքը օգնում է հայերին: Շատ թուրք ընտանիքներ թաքնվում են թիւրքական հիւպատոսարանում. (Րէյտէր):»

Ուշադրութիւն դարձրէք հեռագրի դիպլօմատիական լեզուին. «և օգնում են կոտորել մուսուլմաններին»: Լսեցէք մի ուրիշը. «Պօլիս, 20 դեկ. Թիֆլիսից դեկ. 18-ին հեռագրում են, որ հայերը շարունակում են կոտորել մուսուլմաններին, ինչպէս և ամբողջ Կովկասում, չը ջոկելով ոչ պարսիկներին, ոչ թաթարներին և ոչ ահասարակ մուսուլմաններին: 2,000 մուսուլման ընտանիքներ ապաստանվել են մօտակայ մուսուլմանական գիւղերում: Շատ մուսուլմանների խանութներ թալանված են: Այրված է և յունական եկեղեցին: Ասում են, կառավարութիւնը վրացիներին զէնք է բաժանել և միջոցներ ձեռք առել համոզելու նրանց, որ նրանք օգնեն հայերին կոտորածի մէջ, թէպէտ և շատերը վերցրել են զէնք, բայց նրանց համակրանքը մուսուլմանների կողմն է: Զօրքը պաշտպանում է Թիւրքաց հիւպատոսարանը, բայց այդ պաշտպանութիւնը մակերեսային է: Համաձայն նոյն թւականով Բաթումից ստացված հեռագրի, կազակները և զօրքը Բաթումում թալանում են մուսուլմանների տները». («Le Matin», № 7970).

Սակայն ֆէնկլիշտների հարցիկութիւնները Թիֆլիսով չեն սահմանափակվում. ահա նորից մի նմուշ պերճախօսութեան, որ յատուկ է գալլիւցինացիայից տառապող մի անձնաւորութեան. «Պօլիս, 21-ին դեկ. Բաթումի թիւրքական հիւպատոսը յայտնում է, որ հայերը զինված են ռուսական պօլիցիայի ձեռքով, որ նրա սեփական կեանքը վտանգի մէջ է և խնդրում է օգնութիւն. Բ. Դուռը խիստ կերպով բողոքեց Պետերբուրգում: («Ստամպա»):—Տես «Matin»-ի № 7975.

«Ես գիտեմ, ասում է յօդուածագիրը, որ բոլոր այն աղբիւրները, որոնցից տեղեկութիւններ են քաղում հայակեր թղթակիցները, նրանք բոլորը վարակված են անբարեխղճութեամբ, բայց երբեք չէի կարող երևակայել, որ հարևան բարեկամ պետութեան ներկայացուցիչը, որտեղ ապրում են միլիօնաւոր հայեր, լինէր քամինկլի սուտ աղբիւր: Այդ, անշուշտ, խաբեբայութիւն է, միստիֆիկացիա է»:

Ինչպէս վերև ասացինք, ահա այն բոլոր, ինչպէս ասում են, օձի լեզվով հաղորդած տեղեկութիւնները, որոնց դրդմամբ թուրք կառավարութիւնը իսկոյն շոգենաւեր էր ուղարկել իր հպատակներին ազատելու համար՝ «ռուս կառավարութեան կողմից հայերին բաժանած զէնքերին զոհ գնալուց»: Իսկ թէ ինչ նպատակով են կազմել, այն էլ Թիւրքաց հիւպատոսի կողմից այդ հեռագիրները այդքան խառնիխուռն, վայրիվերոյ, լի ստութիւններով,—դա ի հարկէ թողնում ենք մասնագէտ դիպլօմատներին իրանց տեսակէտով լուծելու, իսկ մեր տեսակէտն այն է, դրանք արեան ծարաւի ցնցումներ են՝ անմեղ արեան և ծով արեան ցնցումներ... Թիւրքաց դիպլօմատները շատ անգամ են գիտեցել երազներ տեսել Ռուսաստանի հետ արեան գործ ունենալու մասին, բայց ամեն անգամ սխալ մեկնութիւն են ունեցել նրանց երազները... Արդեօք նոյնը չի կրկնվի և այսուհետ...

Գ. Գրիգորեանց

ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԸ

I

Բառ անտարբերութեան

Բաւական չէ միայն քաղաքակիրթ պահանջներ, կարիքներ ունենալը. սա դեռ սկզբնական քայլն է առաջխաղացութեան ճանապարհի վրա. բաւական չէ միայն զգալ, գիտակցել, որ այս ինչ բանը անհրաժեշտութիւն, ժամանակի պահանջ է. բաւական չէ նաև այդ կարիքներին ու պահանջներին բաւականութիւն տուող փակտորների առաջացնելը միայն:

Այսքանն էլ մեծ բան է. բայց դեռ ամենը չէ:

Պէտք է նաև կարողանալ, ընդունակ լինել այդ փակտորները նպատակայարմար ու պիտանի, ժամանակին և կեանքին համապատասխան դարձնելու. հակառակ դէպքում դրանք կը լինեն մեռած ծնունդներ, անկեանք ու ապիկար:

Եւ մեր հասարակութեան մի արատաւոր կողմը, մի մեծ պակասութիւնն է եղել նրա այն մեծագոյն ու պատն անտարբերութիւնը, որ նա միշտ տածել է հէնց դէպի իր սեփական աշխատանքի արդիւնքը, դէպի ամեն նորաբողբոջ գործ, դէպի ամեն բարեգործ ձեռնարկութիւն, որոնք նրա վրա շատ էլ էժան չեն նստել. մի խօսքով՝ նա իր անտարբերութեամբ, անփութութեամբ յաճախ խեղդել է հէնց իր ծնունդներին, որոնք եթէ երբեմն չեն մեռել, ոչնչացել, գոնէ երբեք էլ այն չեն եղել, ինչ կը լինէին եթէ հասարակութիւնը պահէր՝—խնամէր դրանց:

Սակայն իմ խօսքը միայն մի երևոյթի մասին է, և այդ երևոյթը ինձ աւելի է զարմացնում ու ապշեցնում, երբ տեսնում եմ, որ անտարբերութիւնը այս դէպքում մի այնպիսի ասպարէզում է երևան գալիս, դէպի որը մեր հասարակութիւնը շատ էլ անտարբեր չէ եղել և հէնց այժմ էլ չէ լինում, և այս անտարբերութիւնը մի բացառիկ երևոյթ է, նոյնքան անհասկանալի և յանցաւոր, որքան և դա մի առաջնակարգ և նշանաւոր հաստատութեան դէմ է ուղղված:

Այդ անտարբերութիւնը ուսման ասպարէզումն է, դէպի մեր միակ բարձրագոյն դպրոցը. դուցէ շատերն էլ չը գիտեն, որ այդ դպրոցը Էջմիածնի հոգևոր ճեմարանն է:

Ամեն անգամ, երբ ես ինձ աշխատել եմ հարց տալ և հասկանալ՝ թէ արդեօք այս ինչ անտարբերութիւն է՝ ես ոչինչ եզրակացնել չեմ կարողացել և չեմ էլ կարողանում: Քանի դեռ տարրական դպրոցներ չունէինք՝ դուցէ քիչ հասկանալի էր այս. բայց դպրոցները ստացանք, սկսեցին խօսել, գրել, ամեն ոք աշխատում էր իր բարի իղձերն ու ցանկութիւնները յայտնել սպասած դպրոցների համար: Գումարվեցին մի շարք ժողովներ, կազմվեցին ծրագիրներ, որոշումներ, ըստ ամենայնի բացառիկ դպրոցները նպատակայարմար, բազմօգուտ, ժամանակի և կեանքի պահանջներին համապատասխան դարձնելու: Առաջարկողներ եղան գիւղական միդասեան դպրոցներում նոյն իսկ տարրական գիւղատնտեսութիւն աւանդելու, եթէ չեմ սխալվում, նաև առողջապահութիւն:

Որքա՛ն մեծ եռանդ, սէր, իղձեր ու ձգտումներ...

Բարի:

Բայց և որքա՛ն կարճատես, որքա՛ն միակողմանի...

Իսկ ի՞նչ գրվեց մեր բարձրագոյն և միջնակարգ դպրոցների մասին. համարեա ոչինչ: Երևի դրանք կարևոր չէին, կարևորը միմիայն տարրականներն էին: Իսկ այն երկու [illegible] հաստատութիւնները, որոնք պէտք է այդ ծխական դպրոցներին ուսուցիչներ տային, քար անտարբերութեան էին մատնված. ոչ ոք եղաւ, որ դրանց համար էլ գոնէ բարի ձգտումներ յայտնէր, աշխատէր դրանց, այդ հոգևոր դպրոցներին ևս կեանքին ու ժամանակին համապատասխանեցնելու, նայելու դրանց ներսը, հոգին, թէ ինչ են և ինչ չեն դրանք:

Եւ ցաւալին այն է, որ այդ անսարք անտարբերութեան մատնված է աւելի բարձրագոյն դպրոցը՝ Էջմիածնի ճեմարանը. միւս դպրոցների մասին երբեմն էլ է գրւում, խօսում են, իսկ ճեմարանի անունը տարիներով դուք մեր մամուլի մէջ չէք հանդիպի և եթէ հանդիպէք էլ՝ շատ անկողմնակի կերպով, այնպէս որ նրան համարեա չը վերաբերի:

Սա մի արատաւոր երևոյթ է մեր հասարակութեան համար:

Էլ ինչո՞ւ է պահում նա այդ հաստատութիւնը, եթէ չը պիտի իմանայ՝ թէ ինչ է եղել այսքան տարվայ ընթացքում, ինչ է այժմ իրապէս և ինչ պիտի լինի, ինչ դեր պիտի խաղայ մեր ուսումնական ասպարէզում բուն բարձրագոյն կրթական հիմնարկութիւն:

Երևի հասարակութիւնը այսպէս է դատում, որ դա հոգևոր դպրոց է (ուսմի և Էջմիածնում), հոգևորների կամքին ու խնամքին թողնված հոգևորներ պատրաստելու մեր աշխարհիկ կեանքի համար:

Շատ բարի, արժանաւոր է մեր ժողովուրդը, նրանից միայն փող, նիւթական են ուզում՝ և նա տալիս է. ինչ կուզեն՝ թող առնեն, միայն թէ իրան չը խօսացնեն, նեղութիւն չը տան: Եւ նա, իբրև մի մեծ օրգանիզմ, բթացրել, մեռցրել է իր մէջ նոյն իսկ այն նուիրական յարգանքն ու հոգատարութիւնը, որ ամեն անհատ տածում է դէպի իր սեփական աշխատանքի արդիւնքը, այն բնազդը, որով նուիրվում է դրան:

Երբ ընդհանուրի, հասարակութեան առաջ (որ միայն պարբերական մամուլի միջոցով է կարելի) հաշւետուութիւն չէ կատարվում, էլ որտեղից կարելի է իմանալ՝ թէ ինչ է այդ դպրոցը, ինչ է կատարվում նրա ներսը, ինչ արդիւնք է տալիս, ինչ է ուսանվում այնտեղ և ինչ չէ ուսանվում, ովքեր են և որպիսին են եղել ու լինում նրա նշանաւոր ղեկավարները,—ինչ են արել նրանք և ինչ դարձրել այդ հաստատութիւնն ու նրա սաներին—որքան հեռացրել կամ մօտեցրել (sic!) կեանքին...

Մեր հասարակութիւնը չը գիտէ թէ ինչ է և ինչ պիտի լինի իր բարձրագոյն դպրոցը. այդ բաւական չէ, նա չէ էլ ուզում իմանալ, նրան այդ չէ հետաքրքրում...

Բայց ես կաշխատեմ մի երկու թռուցիկ ակնարկներով միւս անգամ, որքան կարող եմ, ցոյց տալ նրան իր խեղդող ու յանցաւոր անտարբերութեան անմխիթար արդիւնքը, Էջմիածնի ճեմարանի և ճեմարանցու էութիւնը, դրանց ինչ լինելն ու չը լինելը:

Գ.—Միրո

ԴԱՐՁԵԱԼ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

(Իմ պատասխանը պ. Խաժակին)

IV

Ի՞նչ որակ, ի՞նչ յատկանշական գծեր պիտի ունենան մի երկրի պետութեան պաշտօնեաները, որպէս զի նրանք բիւրօկրատներ լինեն կամ կոչվեն՝ բառիս հարազատ իմաստով. աւելի ճիշտ ու որոշ արտայայտելով՝ ի՞նչ կարգի կրիտերիումներ պիտի ունենան մի երկրի վարչական մեխանիզմի ֆունկցիաներ ղեկավարողները, ադմինիստրացիան, որպէս զի իրաւունք ունենանք ասելու, որ այդ երկրում իշխում է բիւրօկրատիզմը, որպէս տիրապետող սիստեմ:

Բիւրօկրատ լինելու համար, մի երկրի պաշտօնեաներ պիտի ունենան,

1. Կղզիացած միութեան, կամայականութեան տիրապետութիւն: Մի կաստայական հիերարխիա, որի բարձրակարգ, միջնակարգ և ստորակարգ խաւերը՝ հրամանի և կամայականութեան օղակներով շղթայակապված, ստանում են լի ու լի ֆունկցիաներ ծայրագոյն բարձրութիւնից:

2. Որպէս զի կարելի լինի բիւրօկրատ պաշտօնեաներին մեկուսացնել և ամփոփել նրան մի շահերով ու պաշտօնակցութեամբ սերտ կապակցված դասի մէջ, նրան զատել, օտարացնել ազգաբնակութիւնից և խորթ անդամը դարձնել հասարակութեան, անհրաժեշտ է, որ մի երկրի ադմինիստրացիայի կազմը, մանաւանդ նրա պատասխանատու, ծանրակշիռ ֆունկցիաները, վարեն այնպիսի անհատներ (պաշտօնեաներ) կամ անհատների խմբեր, որոնք ծագմամբ բարձր, արտօնեալ, ուրիշ խօսքով՝ հասարակութեան տիրապետող դասակարգից. այսինքն սօցիալական օրգանիզմի այն շերտերից, որոնք իրանց դասակարգային շահերով—տնտեսական թէ սօցիալ-քաղաքական—պաշտպան ու նախաձեռնողներ են տիրապետող կարգերի: Այդ է պատճառը, որ այսօր այնքան գերակշիռ տեղ են բռնում ադմինիստրացիայի մէջ հին ֆէօդալական ժառանգորդները, բարձերի (сословіе) ներկայացուցիչները. ֆօն, բարօն, գրաֆ (կոմս), ֆրայհերր (ազատ տէր) տիտղոսներով Եւրոպայում (Գերմանիա, Աւստրիա) և ազնուական, մելիք, բէկ, իշխան ու մի շարք եւրօպական տիտղոսներ՝ մեր կէս ասիական երկրում (Ռուսաստան): Իսկ եթէ պաշտօնեաներ նշանակվում են բուրժուական (բուրժուական) միւս խաւերից, ապա այդ դէպքում բիւրօկրատների մէջ՝ մեծ մասամբ, ջոկողութեամբ կարգվում են և առանձին-առանձին բարձրանում այնպիսի անհատներ, որոնք իրանց քաղաքական իդէօլօգիայով կանգնած են տիրապետող պետական ռէժիմի տեսակէտի վրա:

Եթէ նոր դարերում՝ աբսօլիւտիզմի ծաղկման շրջանում, միապետները իրանց վարչական բանակը կազմել են «բիւրգերներից», միջին կամ երրորդ դասակարգից և առաջ բերել դրանով բիւրօկրատների մի վարձկան լէգիօն՝ իրանց տիրական ոյժը սահմանափակող ֆէօդալների, միութիւնների և ինքնավար քաղաքների դէմ կռւելու համար, յանուն ծայրահեղ ցենտրալիստական տենդենցիաների, ապա այսօր միահեծան և կէս միահեծան-սահմանադրական երկրների միապետները ոչ միայն ոչինչ երկիւղ ու վտանգ չունեն ֆէօդալիզմի փառահեղ անցեալի փշրված բեկորներից կամ առ հասարակ բարձերի առնմից, այլ ընդհակառակը ունեն ամենամեծ օգուտն ու շահը ուժեղացնելու նրանց նախաձեռնական ճաշակը ու քաղաքական ազդեցութիւնը և նրանցից ընտրելու իրանց վարչական մեխանիզմի ղեկավարները: Արդի Եւրոպայի հակադեմօկրատական և հակապառլամենտարիստական երկրներում պաշտօնեաների բանակը բաղկացած է ոչ միայն վարձկան կրեատուրներից (առկարար ենթարկված բախտախնդիրներից) այլ և, որ գլխաւորն է, այնպիսի խաւերից, որոնք շահերով և քաղաքական ձգտումներով շահագրգռված են տիրապետող սիստեմի գոյութեան խարիսխը, ռէժիմի պաշտպանութեան սիւները դառնալու:

Սա է բիւրօկրատիայի էութիւնը, նրա ինչ լինելը, նրա գոյութեան կրիտերիումը, յատկանշական գծերը. և այս բացատրութեան մէջ, չենք կասկածում, պէտք է համոզված լինի և՛ մեր «փիլիսոփայական» հակառակորդը՝ պ. Խաժակը. նա ևս տեղ-տեղ, մանաւանդ յօդւածի երրորդ մասում (№ 13) թւում է բիւրօկրատիայի բացասական կողմերը, թէև անխնամ և բանաստեղծի գրչին յատուկ խօսքերով («հինչախտ, վամպիր, արիւն ծծող բիւրօկրատիա») և ոչ քաղաքական տերմիններով: Վերջապէս պ. Խաժակը համաձայն կը լինի մեզ հետ, որովհետև նրա գերագոյն հեղինակութիւնը՝ Բրօքհաուզի լէքսիկօնը, այլապէս չէ մտածում. միայն թէ վերջինս հեռու չէ լիբերալի չափաւոր մտքից ու լօգիկայից:

V.

Սակայն բիւրօկրատիայի էութեան բացատրութեամբ մենք պարզեցինք նաև նրա գոյութեան իմաստը. բիւրօկրատիայի «ինչ լինելը» հասկանալի դարձրեց մեզ նրա «ինչու այդպէս լինելը»:

Մենք ասացինք և լրացնում ենք սրանով, որ պետութեան ռէժիմը, երկրի քաղաքական սիստեմը իրանց յարատև գոյութեան և ուժեղ պաշտպանութեան համար կարիք ունեն խորամանկ ու զօրեղ ֆակտօրների: Հակադեմօկրատական ռէժիմներն ու սիստեմները պահանջում են, որ այդ նեցուկ-ֆակտօրները միշտ հրամայական դերի մէջ մնան ամբողջ ազգաբնակութեան հանդէպ, ոչ միայն չունենան ոչինչ համաշահ ու համաձայնում, մանաւանդ դեմօկրատական տարրերի վերաբերմամբ, այլև տրամագծօրէն հակառակ և տեղն ու տեղը ճնշեն այն բոլոր թարմ, նոր հոսանքները ժողովրդի խաւերում, որոնք մահացու հարուածներ են պատրաստում տիրապետող սօցիալական կարգերի, պետական ռէժիմի դէմ: Այդ ֆակտօրներից ամենաուժեղն ու հրէշաւորը կազմում է բիւրօկրատիան և միայն ու միմիայն հակադեմօկրատական պետական կազմ ունեցող երկրներում է, որ իշխում է բիւրօկրատիզմը իր կլասիկ նշանակութեամբ ու ներգործութեամբ:

Հէնց այդ տեսակէտից է, 'ի մէջ այլոց ասենք, որ օրինակ, սօցիալ-դեմօկրատիայի համար բոլորովին սկզբունքային արժէք չունի այս կամ այն մասսայական ռեֆորմ բարձր բիւրօկրատին գահընկեց անելը, այս կամ այն չինովնիկին տեռօրի ենթարկելը: Չարիքի արմատը, ասում ենք մենք, պէտք է որոնել տիրապետող սիստեմի, քաղաքական կառուցվածքի մէջ. ուրեմն պէտք է նրան վերացնել: Մասնակի երևոյթների չքացումը բացառապէս պայմանաւորված է նոյն այդ երևոյթների ծագման պատճառների չքացումով:

Այս կարևոր կէտումն է ահա, որ մենք և պ. Խաժակը ծայրայեղ անտիպօդներ, հակառակորդներ ենք. և այս կարդինալ սկզբունքի սխալ ըմբռնողութեամբ մեր պ. կրիտիկոսը ընկնում է անհաշիւ մոլորութիւնների, քաօսային հասկացողութիւնների մէջ, հանդիսանալով որպէս մի բուրժուական վուլգար իդէօլօգ: Իր բանալ փաստաբանութիւններով, ինչպէս այդ կը տեսնենք, պ. Խաժակը պարզ ցոյց է տալիս, թէ որքան նա հեռու է գիտական մտածողութեան նրբութիւնից:

Մենք ասել ենք «Մուրճում» և այժմ պնդում ենք, որ մեր երկրի բիւրօկրատիզմը,—որպէս վարչական մեխանիզմի մէջ տիրապետող ուղղութիւն,—այդ կաստայական հիերարխիան, պետական մարմնի մէջ լեգիոնի համարված այդ բանդան ու հորդան ոչնչացնելու համար, անհրաժեշտ է նախ ոչնչացնել նրա գոյութեան եղակի նախապայմանը՝ տիրապետող ռէժիմը, սիստեմը—եղաւ այդ միահեծան-միապետական թէ նոյն իսկ արիստօկրատական-հանրապետական—և որքան կարելի է դեմօկրատական հիմքերի վրա կառուցանել քաղաքական կազմը: Դեմօկրատական այն աստիճան, որ պետական ոյժի միահեծան վեհապետը դառնայ ինքը ժողովուրդը, բազմամբոխեան դեմոսը:

Այդպէս չէ դատում պ. Խաժակը: «Բիւրօկրատիա և կենտրոնացում,—առաջ է նետում նա իր շաբլօնական ֆրազը,—կենտրոնացում և բիւրօկրատիա. դրանց իրարից բաժանել անկարելի է: Եթէ կայ մի հրամայող ու որոշող կենտրոն—լինի ռէժիմը ինքնակալական թէ հանրապետական (ինչ կարգի հանրապետական՝ բուրժուական-արիստօկրատական թէ զուտ դեմօկրատական, այդ մի և նոյն է պ. Խաժակի համար. Բ. Ի.)—մի և նոյն է. այնտեղ պէ՛տ է իշխէ բիւրօկրատիզմը»:

Մենք ասում ենք, որպէս զի կարելի լինի պաշտօնեաների տիրական-հրամայական և կաստայական-կամայական բնոյթը յեղաշրջել, դերը վերացնել և դնել նրանց անձնուիրական դերի մէջ, տալ նրանց հասարակութեան բարեկեցութեանը ծառայելու բնոյթ, մի խօսքով՝ հրամայող տիրոջից դարձնել հաւատարիմ ու հնազանդ ծառայ, անհրաժեշտ է ամենից առաջ խորտակել հրամայական ու կամայականութեան հիմքը՝ տիրացած բանակալ ռէժիմը, և պետութեան գերիշխանութիւնը (սուվերենիտէտ) յանձնել ժողովրդի ձեռքը:

Սակայն մեր պ. քննադատը առարկում է, որ «դա այնքան էլ մեծ նշանակութիւն չունի». անհրաժեշտ է, ըստ նրա դատողութեան, որ պետական «որոշումները գործադրութիւն գտնեն ոչ թէ ամբողջ կայսրութեան մէջ, այլ մի փոքրիկ վայրում՝ մի գաւառում կամ նահանգում» դրանով միայն կը վերանայ «հինծախտ», «վամպիր» բիւրօկրատիան:

Մենք պարզ ու շօշափելի օրինակներով ցոյց ենք տուել պ. Խաժակին «Մուրճի» մեր յօդւածում, թէ որ աստիճան անհիմն, մեխանիքական և տենդենցիօզ է—կաւելացնենք այժմ—նրա այդ դատողութիւնը: Իսկ պ. Խաժակը՝ ձեռնտու չը լինելու համար մի կողմ է թողնում մեր բերած օրինակները և «զինւում» Բրօքհաուզի լէքսիկոնով՝ մեր դէմ «կռւելու» համար:

Խեղճ Բրօքհաուզի «Бюрократія» յօդւածի հեղինակը, որ մարդիկ գրածը սխալ հասկանալով, այնքան անծայր չափազանցութիւնների մէջ են ընկնում:

Բրօքհաուզը խօսում է այն երկրների մասին, որտեղ բիւրօկրատիա եղել է և կայ այժմ, որպէս բիւրօկրատիզմի կլասիկ ներկայացուցիչներ, և յայտնում այն համեստ, [illegible] կարծիքը, որ այդպիսի երկրներում «ապակենտրոնացումն ու ինքնավարութիւնը միակ միջոցներն են բիւրօկրատիան թուլացնելու (և ոչ վերացնելու կամ խորտակելու նրա ոյժը, ոչ ազատելու ժողովրդը այդ «հինծախտից». լաւ կարդացէք այդ տողերը պ. Խաժակ. Բ. Ի.): Այդ միջոցները սեղմում են բիւրօկրատիայի գործունէութեան րայօնը»:

Ահա ձեզ, ընթերցող, պ. Խաժակի գերագոյն հեղինակութեան պարզ ու հասկանալի դատողութիւնը, որ նա իր յօդւածի մէջ առնելով, այնուամենայնիւ, շարունակում է իր «էշը քշել»—անմեղ ու պարզ կարծիքի վրա հիմնել իր միտումնաւոր, տենդենցիօզ նոյնքան անհեթեթ կարծիքը:

Խօսենք օրինակներով:

Եթէ մի երկրի պետական ռէժիմը այն աստիճան ինքնակալական ու կէս միահեծան-սահմանադրական է, ինչպէս Ռուսաստանը՝ մի կողմից, և Գերմանիան ու Աւստրիան՝ միւս կողմից է, այն ժամանակ, իրաւ որ, ըստ Բրօքհաուզի, առանց ռէժիմի փոփոխութեան, միայն պետութեան անդամահատութեամբ է թուլանում բիւրօկրատիայի ոյժը. սակայն նրա որակը, նրա էութիւնը, որպէս բիւրօկրատիա, մնում է նոյնը, չէ անյայտանում, միայն մեղմանում է, պ. Խաժակ, այն, լաւ ըմբռնեցէք, թէկուզ հէնց անդամահատված մարմիններից իւրաքանչիւրը մի-մի «փոքրիկ վայրեր, նահանգներ» լինեն:

Ենթադրենք հոկտեմբերի 17-ին հրատարակած մանիֆեստի կէտերով իրականանում է պ. Խաժակի սրբազան իղձը—սահմանադրական կազմ ինքնավարական կամ ֆեդերատիւ հիմքերի վրա. մի սահմանադրական կազմ, որ աւելի վատթար կը լինի, քան գերմանականը—կասէք նաև դուք, պ. Խաժակ: Ենթադրենք ինքնավար կամ ֆեդերատիւ մարմիններ կազմում են՝ Մեծ Ռուսիա, Փոքր Ռուսիա, Սիբիր, Լեհաստան, Լիտուա, Ֆինլանդիա և Անդրկովկաս (կամ Կովկաս):

Այժմ ասացէք խնդրեմ, պ. Խաժակ, «փոքրիկ վայր Անդրկովկասը՝ իր 247,088 km.² տարածութեամբ և 5,740,337 բնակիչներով, Լեհաստանը՝ իր 117,319 km.² տարածութեամբ և 9,5 միլիոն բնակիչներով և Ֆինլանդիան՝ իր 373612 km.² տարածութեամբ և 2,5 միլիոն բնակիչներով—կունենան այդ «փոքրիկ վայրերը» մի-մի «վամպիր» ու «հինծախտ» դարձած բիւրօկրատիա:

Այո, պ. Խաժակ, բիւրօկրատիզմի հիմնական որակը, նրա գոյութեան էական կրիտերիումը—կամայականութիւնը, կաստայական ոգին, տիրական-հրամայական դերը—երբեք չեն կարող չքանալ այդ փոքրիկ վայրերում, քանի միահեծան ռէժիմը, քաղաքական բռնակալ սիստեմը փոփոխութեան կենթարկվի միայն այնքան, որքան այդ թոյլատրում են հոկտեմբերի 17-ին հրատարակած մանիֆեստի կէտերը: Փոքր ինչ ուրիշ բան կը լինի, ի հարկէ, եթէ այդ մանիֆեստի ոյժով իրականացած սահմանադրութիւնը չունենայ տերրիտօրիալ—ինքնավարական կամ ֆեդերատիւ կազմ, այլ բիւրօկրատական ցենտրալիզմ (կենտրոնացում) բովանդակ Ռուսաստանի համար: Այդ դէպքում արդէն, պ. Խաժակ, բիւրօկրատների գերազանց բանակը ոչ թէ առաջ է բերում նոր որակ, այլ ուժեղացնում է արդէն իսկ գոյութիւն ունեցող որակը, ուղղութիւնը, սաստկացնում է բիւրօկրատիայի կաստայական հիերարխիան և աւելի «վամպիր» ու «հինծախտ» դարձնում նրանց: Ահա այստեղ է, որ ճշտվում է Բրօքհաուզի այն կարծիքը, թէ պետութեան դեցենտրալիզացիան մեղմացնում է բիւրօկրատիայի կաստայական ոգին: Սակայն եթէ Բրօքհաուզի յօդւածի հեղինակը չունենար լիբերալի համեստ ու խոհեմ գաղափարների ընթացքի մասին, այլ ունենար քաղաքական փոքր ինչ ըմբռնում ու արմատական միտք, նա էական չէր համարի պետութեան ապակենտրոնացումը՝ բիւրօկրատիայի գոյութեան դէմ կռւելու համար, այլ նոյն այդ բիւրօկրատիային ծնունդ տուող, սնող ու պահպանող քաղաքական ռէժիմի տապալումը, տիրապետող սիստեմի վերացումը:

Որ պ. Խաժակը մի լիբերալի համեստ ու խոհեմ կարծիքից դէնը չէ անցնում, դա, խոստովանում ենք, մեզ այնքան էլ չէ զարմացնում: Եւ որ պ. Խաժակի համար կարող է բոլորովին մի և նոյնը լինել, արդեօք Ռուսաստանի քաղաքական կազմը սահմանադրական է իր միապետով թէ հանրապետական իր «Իւանով» անունով նախագահով, դա, դարձեալ խոստովանում ենք, մեզ դեռ էլ աւելի չէ զարմացնում: Ինչ չափ ու ծաւալով ուզում է, թող փոփոխութեան ենթարկվէ տիրապետող սիստեմը, դա փոյթ չէ և «այնքան էլ մեծ նշանակութիւն» չունի պ. Խաժակի համար: Նրա քաղաքական ամենաբարձր ու սրբազան իղձը պետութեան ապակենտրոնացումն է. միայն այդ ձևը կարող է, ըստ նրա, չարիքը արմատախիլ անել—բիւրօկրատիան ոչնչացնել:

Բայց մենք դեռ ուրիշ փաստեր էլ ունենք:

Բ. Իշխանեան

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, քաղաքիս ոստիկանութեան պահպանութեան համար քաղաքային գանձարանը տարեկան վճարում էր 100,000 րուբլի: Այդ գումարը իւրաքանչիւր տարի միանւագ քաղաքը վճարում էր տարվայ վերջը՝ դեկտ. ամսին: Անցեալ տարի քաղաքումս տիրող տագնապները, գործադուլները և այլ արկածները վերին աստիճան նւազեցրին քաղաքային եկամուտները,—ուստի և քաղաքը ենթարկվելով դրամական ճգնաժամի՝ անկարող եղաւ յիշեալ գումարը անցեալ դեկտեմբերին վճարելու: Այն ինչ Թիֆլիսի նահանգապետը ներկայ տարվայ յունվարի 8-ից գրաւոր պահանջեց քաղաքային վարչութիւնից՝ անյապաղ ներկայացնել տեղիս նահանգական գանձարանին յիշեալ 100,000 ր.: Քաղաքային վարչութիւնը իր նիստում քննելով այս խնդիրը, իր կողմից որոշել է՝ միջնորդել ուր հարկն է ազատ կացուցանելու քաղաքային վարչութիւնը այդ գումարը վճարելուց, ինկատի ունենալով քաղաքային գանձարանի թշուառ վիճակը և կամ պետական գանձարանից՝ քաղաքին հասանելի 350,000 ր. պարտքից (պալատի գնահատական տուրք) դուրս գալ յիշեալ 100,000 րուբլին: Վարչութեան այդ որոշումը զեկուցվեց յունվարի 23-ի քաղաքային խորհրդի նիստում. խորհրդականները ձայների մեծամասնութեամբ հաւանութիւն տալով այդ վճռին—որոշեցին, որ այդ իմաստով քաղաքային վարչութիւնը պատասխանէ ուր հարկն է:

«Կավկազ» թերթը տպագրել է Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հետևեալ կարգադրութիւնը՝ 1906 թ. յունվարի 23: «Ի նկատի առնելով Թիֆլիսում հրատարակվող «Нов Обозрѣніе» օրաթերթի բռնած վնասակար ուղղութիւնը, որը ի մէջ այլոց արտայայտված է թերթի № 15-ում տպագրված, չը նայած իմ նախազգուշացման, պարզ հակապետական բնաւորութիւն կրող առաջնորդող յօդւածում, ես, Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ-նահանգապետս, գեներալ-մայոր Տիմոֆէյէվ, որոշեցի՝ 1892 թ. հրատ. օրէնք. ժող. 11 հատ. հանր. հիմ. նահ. 23 յօդ. յաւ. 19-ի, 14 հատվ. հիման վրա, յիշեալ թերթի հրատարակումը դադարեցնել ամբողջ ժամանակ քանի Թիֆլիս քաղաքում զինւորական դրութիւն է մնում: Ստորագրեց. գեներալ-մայոր Տիմոֆէյէվ:

Պետերբուրգից յունվարի 22-ին հեռագրում են «Կավկազ» թերթին. «Ռուսաստանի զանազան քաղաքներից համառուսական մահմեդական համաժողովին մասնակցելու համար յունվարի 15-ին, ի թիւս ուրիշ մահմեդականների, Պետերբուրգ եկած մահմեդական պատգամաւորները այսօր յետ գնացին իրանց տեղերը, որովհետև ներքին գործերի մինիստրը վերջնականապէս մերժեց թոյլատրել համաժողովի նիստերը»: Այդ առիթով Բագւում լոյս տեսնող «Իրշադ» թուրք լրագիրը հաղորդում է, որ համաժողովի արգելման պատճառը ուղարկված մասնութիւններն են:

Թիֆլիսի նահանգապետը առաջարկել է քաղաքային վարչութեանը եօթ օրվայ ընթացքում ներկայացնել քաղաքային դումայի այն որոշումների պատճէնները, որոնք կայացել են անցած տարվայ նոյեմբերի 12, 15, 21-ի և դեկտեմբերի 11-ի նիստերում:

Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնակատարը յայտնում է ի գիտութիւն Թիֆլիս քաղաքի բոլոր տանտէրերին-Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի նահանգի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանը, որով ոչ ուշ քան փետրվարի 10-ը իւրաքանչիւր տուն պէտք է ունենայ լապտեր բոլորովին նման որոշված լապտերներին, որոնց օրինակները կան բոլոր ոստիկանական մասերում (участки), ոստիկանապետի գիւանատանը և կօմէնդանտի վարչութեան մէջ: Լապտերի վրա պարզ նշանակված պէտք է լինի փողոցի անունը և տան համարը: Այս հրամանը չը կատարողները ենթարկվում են մօտ 3,000 ր. տուգանքի, կամ երեք ամսվայ բանտարկութեան:

Երկուշաբթի, յունվարի 23-ին, քաղաքային խորհրդի նիստում ի մէջի այլ հարցերի՝ նշանակված էր քաղաքային վարչութեան երկու անդամի ընտրութիւնը—ի տեղի Տիգ. Էնֆիաճեանի և Ն. Գ. Գեօկչաեվի: Առաջարկված թեկնածուներից քուէարկվեցան երեք հոգի՝ բժ. Ալ. Խատիսեան, Ն. Գ. Գեօկչաեվ և Ս. Ֆ. Զրեյանով (խորհրդի քարտուղար): Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցան, ձայների մեծամասնութեամբ, պ. պ. բժ. Ալ. Խատիսեան (30 սպիտ. և 14 սև) և Ն. Գ. Գեօկչաեվ (28 սպ. և 16 սև). պ. Զրեյանով ստացաւ 16 սպ. և 38 սև քուէ:

Քաղաքային վարչութիւնը յանձնված է վերջին չորս ամիսներում քաղաքի մէջ տեղի ունեցած անցքերի և արկածների պատմութիւնը գրել և ներկայացնել քաղաքային խորհրդի նիստերից մէկում: Բացի այդ՝ այն վնասները, որոնց ենթարկվել է քաղաքը—նոյնպէս պէտք է արձանագրվի վարչութեան կողմից: Յիշեալ երկու հարցերը արծարծեցին քաղաքային խորհրդի վերջին նիստում ձայնաւորներ պ. պ. Ն. Գրիգորեան և բժ. Վարդանեանը, որոնք և ընդունվեցան ձայնաւորների մեծամասնութիւնից: Այդ պատմութիւնը կը մնայ մեր ինքնավարութեան ընդհանուր տարեգրութեան մէջ՝ յետնորդների համար որպէս պատմական նիւթ:

Վրաց շաբաթաթերթ «Մօգզաուրի» (ճամփորդ), որը հրատարակվում էր Թիֆլիսում ուսուցիչ Ի. Գ. Ռօստոմովի խմբագրութեամբ՝ ներկայ ձախողակի պայմաններում մի առժամանակ դադարեցրված է լրագրի հրատարակութիւնը խմբագրութեան կարգադրութեամբ:

Մենք լսում ենք, որ տեղական երաժշտական գործիչ Դ. Մ. Փուղինովը այս օրերս վերջացրել է իր երեք գործողութիւնից բաղկացած «Պատերազմ և Խաղաղութիւն» կամ «Խարուած դիպլօմատ» անունով օպերետ, որի լիբրետօն պատկանում է Ա. Օպօչինինին: Այդ օպերետը մտադիր են առաջին անգամ բեմի վրա դնել Մեծ պասին:

Ստացանք կըրբանցի հայերի օգտին 10 ր. 12 կ., որ հաւաքվել է մի ընտանեկան խնջոյքում, Ա. Գիգիլեանցի մօտ:

Շուշու վնասված հայերի օգտին ստացանք՝ 1) Անապայից Ա. Ղազանճեանի միջոցով հաւաքած 30 ր. 2) Պետրօվսկի քաղաքի աշխատաւորներից 50 ր. 3) Դ. Տ.-Յ-ից փոխանակ սովորական մատաղի 5 ր. 4) Անապայի առաքանոյ ժողովրդից 102 ր. 50 կ. 5) Ախալքալաքի հայ հասարակութիւնից Ծննդեան տօնի առիթով այցելութիւնների փոխարէն՝ Մովսէսեանի միջոցով հաւաքած 554 ր. 6) Գրիգոր Քոփալեանից (Ախալցխա) իր որդուց պսակադրութեան երաժշտութեան փոխարէն 100 ր. 7) Տաշքենդից օր. Արիեանի, Բէկնազարեանի, Վասմեանի և պ. Քամալեանի ձեռքով հաւաքած 187 ր. 50 կ.:

Օպերային միացեալ ընկերութեան արտիստները, երաժշտական, քառաձայն և բալետային խմբերի անդամները որոշել են ուրբաթ, յունվարի 27-ին, Ալէքսանդրօ-Նեվսկի մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարել իրանց ընկերոջ՝ ռուսաց օպերային խմբի երգչուհի Ն. Ա. Պապայեանի համար, որը վախճանվել է Աստրախանում, յունվարի 21-ին, 1906 թ.: Հոգեհանգստի սկիզբը՝ առաւօտեան ժամը 10-ին:

Բագուի նահանգում սենատոր Կուզմինսկու ձեռքով կատարած քննութեան գործնական հետևանքն այն եղաւ, որ քրէական հալածանք է սկսված Բագուի և Բալախանի-Սաբունչիի ոստիկանապետների, չորս ոստիկանական պրիստաւների, մի պրիստաւի օգնականի և մի օկօլօդոչնիի դէմ: Նրանք մեղադրվում են այն բանի մէջ, որ նրանք հնարաւոր միջոցներ ձեռք չէին առնում առաջն առնելու և դադարեցնելու նրանց աչքի առաջ կատարվող սպանութիւնները, հրդեհումները և կողոպուտները, որ նրանք օգնութեան չէին հասնում վտանգի մէջ գտնվող և նրանց դիմող անձանց, որ նրանք չէին ցրում և գինեթափ չէին անում փողոցներում տեղի ունեցող համախմբումները և չէին բռնում գոնէ նրանց, որոնք նրանց աչքի առաջ էին կատարում այդ յանցանքները: Վերոյիշեալ պաշտօնատար անձինք մեղադրվում են պատժական օրէնսգրքի 341-դ յօդւածի հիման վրա, հեռացնելով պաշտօնից նրանց, որոնք դեռ շարունակում են ծառայութեան մէջ մնալ:

Դոնի շրջանում իշխանութիւնը առաջարկեց պետական ծառայութեան մէջ գտնվող բժիշկներին, կամ հրաժարական տալ պաշտօնից կամ դուրս գալ սահմանադրական-ռամկավար կուսակցութեան կազմից:

Նարօվայի գաւառներից տխուր լուրեր են ստացվում: Գիւղական շատ ուսումնարաններում ուսումը չէ վերսկսվում, որովհետև ուսուցիչները կալանաւորված են կամ գիւղացիների հետ Ռուսաստանի ներկայ վիճակի մասին զրուցելու համար, կամ թէ նրանց մէջ թոյլատրված հանրամատչելի գրքոյկներ տարածելու համար: Ոստիկանութիւնը խիստ կերպով հաւաքում է գիւղացիներից՝ անխտիր՝ ամեն տեսակ գրքեր: Զինաթափ են անում մտաւոր զէնքերից անգամ:

Պետերբուրգի լրագիրները «Կէօնիգսբերգ Թերթ»-ից քաղելով հաղորդում են, որ Վիլնայից ստացված մի հեռագիր հաստատում է այն լուրը, որ յունվարի 6-ին Ցարսկոյէ—Սելօյում բանտարկվեցին երկու կին, որոնց մօտ խենջալ գտնվեց: Նրանք կայսի շորեր էին հագել: Կալանաւորվածները յեղափոխական ընկերութեան ներկայացուցիչներ էին: Բացի սրած խենջալներից, նրանց մօտ գտան երկու կասկածելի արկղիկներ ևս: Թէ այդ արկղիկների մէջ ինչ կար, յայտնի չէ:

«Կավկազ»-ին հեռագրում են, որ Պետերբուրգում յամառ լուր է պտտում, որ գեներալ Լինևիչը յետ է կանչվում հեռաւոր Արևելքից և նրա տեղ նշանակվում է գեներալ Գրօդէկով:

Կազան քաղաքում թուրք կանայք խնդրամատոյց են եղել քաղաքային վարչութեանը, որպէսզի թուրքական գրադարանում նշանակվեն առանձին ժամեր կանանց յաճախելու համար, որովհետև, ըստ իրանց սովորութիւնների, տղամարդկանց հետ միասին կարդալը անկարելի է:

Արդարադատութեան մինիստր Ակիմօվը յայտնել է երդուեալ հաւատարմատարների խորհրդին, որ այսուհետև վերջինս չը ներկայացնէ հրէական կրօնը դաւանող անձանց երդուեալ հաւատարմատարի կոչումով ի հաստատութիւն:

Պետերբուրգից հեռագրում են Լօնդօն, որ Զաբայկալում խառնակութիւններ են տեղի ունենում կօզակների, գիւղացիների և օտարացեղների մէջ: Ազգաբնակութեան այդ բոլոր խմբերը վերջնականապէս մերժում են սեփականութեան իրաւունքը և իրանց համար ընտրում են, թէ քաղաքներում և թէ գիւղերում, ժամանակաւոր կառավարութիւն:

Մենք ստացանք Սիմֆերօպօլից Հերթեղեան քահանայից հետևեալ հեռագիրը. «Բեսարաբիայի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը յունվարի 17-ին հեռագրով խնդրել է Տաւրիկեան նահանգապետին, որ ոստիկանութեան ձեռքով անմիջապէս ուղարկեն ինձ Էջմիածին, իբր թէ ես խանգարում եմ Թէոդօսիայի հայ հասարակութեան հանգստութիւնը: Այս պահանջը հիմնված է կոպիտ անճշմարտութեան վրա, որովհետև պաշտօնական դօկումենտներով ես ապացուցի, որ յունվարի 15—23 ես գտնվել եմ Սիմֆերօպօլում. նահանգապետին խփած հեռագրի պատճէնը ինձ մօտ է, սաստիկ յուզված եմ այդ զրպարտութեամբ. որոշեցի հեռագրել և դատարանով բաւարարութիւն պահանջել. այս օրերս գնում եմ Էջմիածին»:

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ Բագւում հրատարակվող «Кавказское Слово» թերթը յունվարի 2-ին, երեկոյեան ժամի $9\frac{1}{2}$-ին փակված է:

Մօտ օրերս «Сѣверн. Банкъ»-ի Բագւի բաժանմունքի կեղծ փոխագրութեան համաձայն Թիֆլիսի առևտրական բանկը վճարեց 12,000 րուբլի: Այդ կեղծիքի մէջ կասկածվում է վերոյիշեալ «Сѣверн. Банкъ»-ի նախկին ծառայող Նիկօլա Պրիցկեր:

Զուգդիդի գաւառապետ պ. Գեդամօվ նշանակված է Քութայիսի գաւառապետ:

Տիկին Նավօլոսկայի ցենզուրան արգելել է նրա ներկայացրած 28 պիեսները:

Արտասահմանից ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, իշխան Սվեատօպօլկ-Միրսկու առողջութիւնը նշանաւոր կերպով վատացել է: Վերջին կաթուածը պատահեց նրան յունվարի 9-ին: (Р. В.):

Յայտնի էմիգրանտ սօցիալ-դեմօկրատիական կուսակցութեան անդամ Դէյչ, որը Պետերբուրգումն էր գտնվում նոյեմբերեան մանիֆեստի օրից և ձերբակալված էր թարօնում, որպէս հաղորդում է «Ber. Tag.» լրագիրը, փախել է բանտից:

Լօնդօնից «Ber. Tag.» լրագրին հեռագրում են. «Հօմէլից և Մօգիլէվից ստացված հեռագիրները այստեղ ծանր տպաւորութիւն են գործում: Երեկոյեան լրագիրներում յունվարի 17-ից տպված է մի հեռագիր Պետերբուրգից՝ սպառնալից հրէական ջարդերի մասին հարաւային քաղաքներում: Հրէական ազգաբնակութիւնը փախչում է սարսափահար: Ճիշտը պէտք է ասել, որ ոչինչ այնքան չէ վնասում Ռուսաստանին, որքան լուրերը հակահրէական անկարգութիւնների մասին: Հասարակութիւնը այստեղ առ միշտ ընտելացել է հաւատալ, որ ադմինիստրացիան է կազմում ջարդերը Պետերբուրգի իշխանութիւնների աջակցութեամբ:

Ռուս կառավարութեան ֆինանսների նախկին մինիստր Կօկօվցևի յանձնած միսիան—Ֆրանսիայում 266 միլիոնի փոխառութիւն կնքել հաստատուն պահելու համար ռուբլու կուրսը, յայտնի է մեր ընթերցողներին: Այդ փոխառութեան մասին խօսելով իր թերթում, Ժօրէս ասում է. «Ֆինանսիստները ռուս կառավարութեան ավանս են անում միայն 266 միլիոնի ոսկեդրամ: Նրանք այդ ոսկին պէտք է ճարեն իրանց յաճախորդներից, ռուսական գանձարանի ստացականներ, վճարաթղթեր (bon) ծախելով, որոնք տոկոսաբեր են և վճարելի՝ ներկայացնելու դէպքում: Անվստահ և ծանրաբեռնված յաճախորդները գրաւելու համար, հարկաւոր է նրանց խոստանալ, որ գանձարանի այդ bon-երը, որ նա գնել է, պէտք է տոկոսաբեր լինեն ինչպէս մի որ և է ընտիր թուղթ և ներկայացնելուն՝ վճարելի, ինչպէս մի բանկնոտ, թղթադրամ: Բայց ռուս կառավարութիւնը ինչպէս պիտի կարողանայ այդ bon-երի վճարումը ապահովել: Մեր լրագիրները հասարակութեան յայտնեցին, «որ այդ կապիտալը Ֆրանսիայում պիտի մնայ»: Անկասկած դա նշանակում է, որ բանկերի կողմից ռուս կառավարութեան համար հաւաքված փողը պիտի ծառայէ վճարելու, հէնց նոյն իսկ Ֆրանսիայում, նախապէս կնքված փոխառութիւնների տոկոսները: Այսինքն թէ ֆրանսիական հասարակութիւնը պէտք է հրաւիրվի մատակարարելու մինչև 266 միլիոն, մի գումար, որ անհրաժեշտ է վճարելու համար տոկոսները այն գումարների, որ ռուս կառավարութիւնը պարտ է նրանց: Նշանակում է պահանջատէրն է, որ հրաւիրվում է հայթայթել իր պահանջի տոկոսները: Ահա, որտեղ է հասել բիւրօկրատիական կառավարութեան խնդիրը»:

Հիմնական օրէնքների փոփոխութեան նախագիծը ներկայումս բոլորովին պատրաստ է և կը հրատարակվի համապատասխան մանիֆեստի հետ միասին: Այս, որպէս հաղորդում են, նախագիծը իր ամբողջ ծաւալով կը ներկայացվի Պետական Դումայի քննութեանը, և Դուման բազմակողմանի քննութեան կենթարկէ նրան, միայն այն ժամանակ նախագիծը կընդունի վերջնական օրէնքի ձև (Слово):

(Слово) լրագրին հաղորդում են հետևեալը Նօվօրօսիյսկում տեղի ունեցած դէպքերի մասին: «Այնտեղ հրատարակված էր դեմօկրատիական հանրապետութիւն: Խորհրդի գլուխ կանգնած էր մի մարդ, որին խաղաղ ազգաբնակութիւնը անուանում էր նահանգապետ: Առևտրական և արդիւնաբերական բոլոր ձեռնարկութիւնների վրա եկամտային հարկ էր դրված (բաւական թեթև) ի նպաստ չքաւոր դասակարգի: Հանրապետականների գլխաւոր ուշադրութիւնը դարձված էր մարտնչող դրուժինա կազմելու վրա և դրա համար հանգիստ զօրահանդէսներ էին կատարվում երաժշտութեամբ: Զօրքերին զինւորելու համար բոլոր բնակիչներից զէնքերը խլեցին թէ քաղաքում և թէ շրջակայ գիւղերում: Կազմակերպված զօրաբաժինները ստացան տարօրինակ երկարութիւն և ձև ունեցող նիզակներ, որ նոր պատրաստված էին տեղական արհեստանոցներում: Դրուժինայի այդ զինւորներն էին կարգը պահպանում: Աստուած գիտէ թէ ոչ փախած ոստիկանութեան փոխարէն նրանք օրէնքը պաշտպանողի դերն էին ստանձնել ամենալաւ կողմից: Գոնէ ոչ ոք չէր գանգատվում նրանց դէմ: Դեկտեմբերի 20-ին քաղաք վերադարձան իշխանութիւնները, հետևակ զօրքը և արտիլերիան: Յեղափոխականները ոչինչ դիմադրութիւն չը ցոյց տուեցին: Իշխանութիւնը կալանաւորեց մի քանիսներին և կեանքը շուտով իր նախկին ընթացքն ստացաւ:

«Нов. Вр.»-ի յունվարի 14-ի համարում տպագրված է հետևեալ աղմկայոյզ հեռագիրը. «Բագու, յունվարի 12-ին: Բագւից, իբրև Բագւի թուրք հասարակութեան ներկայացուցիչներ, ճանապարհվեցին՝ Կարաբէկով, Թօփչիբաշէվ, Ախունդով, Ասադուլլայէվ և Սաֆիխօվ այս յունվարի 15-ին ընդհանուր Ռուսաստանի թուրքական համաժողովին մասնակցելու համար: Սրանով Բագւի թուրք հասարակութիւնը յայտնում է, որ յիշեալ անձանց ոչ ոք լիազօրութիւն չէ տուել և չէ ուղարկել համաժողովին մասնակցելու. որովհետև նրանք յեղափոխականներ են և նրանք իրանք, առանց հասարակութեան գիտութեան և համաձայնութեան, եկել են այստեղ, հասարակութեան ներկայացուցիչների կոչումը իւրացնելով. մի բան որ կարելի է ապացուցանել ոստիկանական քննութիւններով, եթէ նրանք այսուհետև էլ իրանց անուանեն հասարակութեան ներկայացուցիչներ: Բագւի թուրք հասարակութիւն: Հաջի-Մեջիդ Ալէքպերով:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունվարի 22-ին Աւճալեան փողոցի վրա բռնվել է Ջահուկ (Նախիջևանի գաւ.) գիւղի բնակիչ Ստեփան Սողոմոնեանը, որի մօտ գտնվել են 3 ատրճանակ «Նագան» սիստեմի և 1-ը Մաուզերի, իսկ բնակարանում 700 հատ ատրճանակների փամփուշտներ: Սողոմոնեանը, ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ ձերբակալված է:

Յունվարի 23-ին առաւօտեան 10 ժամին 5-րդ քաղաքամասի ոստիկանատան մօտ Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Յ. Նարալեանը յայտնեց, որ յունվարի 23-ի լոյս գիշերը անյայտ չարագործները նրա խանութի (Պուշկինսկի փող. տուն Սանդուխեանի) դռների վրա եղած կողպէքները կոտրելով, գողացել են մետաքսէ կտորներ, (բաւրօ) 1000 րուբ. արժողութեամբ, արտասահմանեան և Կովկասի մետաքսէ թաշկինակներ 600 ր. արժողութեամբ և փայտէ կասսայից 43 ր. փող:

Յունվարի լոյս 23 գիշերը պարսկահպատակ Արշակ Զարուխչեանը մէշօկներ գողանալու նպատակով, կոտրեց Շալյանովի տան (Դիդուբէ) դռան վրա եղած կողպէքը, իսկ յետոյ, կոտրելով թիւրքահպատակ Հաջթուխ Արշակ Տօնգուզեանցի խանութի պատկին, մտաւ խանութը, բայց Տօնգուզեանցը բռնեց նրան. յանցաւորը դատի է ենթարկված:

Յունվարի 22-ին Ե. Կամենսկին յայտնեց 8-րդ քաղաքամասի պրիստաւին, որ Սեդրակ Վարձելօվը նրա գրպանից հանել է 32 ր. փող. Վարձելօվը բռնված է. նա խոստովանեց գողութեան մէջ. յանցաւորը դատի է ենթարկված:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Դրէյֆիւսի դատը, տնտեսական, քաղաքական ու բարոյական խոշոր յեղաշրջումների մի աղբիւր դարձաւ Ֆրանսիայում: Իշխանութեան գլուխ անցան ձախակողմեան հանրապետականները, ռադիկալները, ռադիկալ-սօցիալիստները, որոնք աշխատեցին իրագործել ոչ միայն զօրքի պետերի հետզհետէ դեմօկրատացումը, այլ և Եկեղեցին Պետութիւնից բաժանելու հարցը: Քաղաքական այդ խնդիրների աջող լուծման հետ զուգընթաց է գնում սօցիալական մի շարք բարենորոգումների իրականացումը: Հանրապետական կառավարութեան գործերում մեծ ազդեցութիւն և դեր են կատարում սօցիալիստները, որոնց աջակցութեան դիմեցին և դիմում են ֆրանսիական միմեանց յաջորդող մինիստրութիւնները: Պարլամենտական առաջիկայ նստաշրջանում, Եկեղեցին Պետութիւնից բաժանելու կարևոր հարցի լուծումից յետոյ, պէտք է քննութեան ենթարկվեն սօցիալական ռեֆորմները, բանւորների դրութեան բարւոքումը, նրանց կեանքի ապահովութիւնը, անգործութեան, հիւանդութեան աշխատանքի ժամանակ պատահած այլ և այլ դժբաղդութիւնների դէմ: Ֆրանսիայի սօցիալիստ պատգամաւորները, հանրապետականներին իրանց մատուցած ծառայութեան փոխարէն, այժմ պահանջում են մի շարք բարենորոգումներ, որոնք իշխանութեան գլուխ գտնվող արմատականների համար ամենևին անհարկի չեն: Ընդհակառակը, նոյն արմատականները՝ «Radical» թերթում այդ պահանջները գտնում են բաւական չափաւոր և գիտել են տալիս մասամբ հեգնութեամբ, որ արդեօք ֆրանսիական պրօլետարիատը «խելօքացել» է, խոհեմացել: Նրանց ներկայ պահանջների մէջ չը կայ, օրինակի համար, ան-

Электропечатня типографіи Т-ва Гермесъ, Мад. ул. № 15.

փականութեան համայնականացումը, անկիւնաքարը, սօցիալիզմի։ Ժօրես, այդ նկատառութիւններին շտապում է պատասխանել, որ նրանք գնում են այն պահանջները, որոնք կարելի է հէնց այս րոպէիս իրագործել և որոնց դէմ չեն կարող լինել իրանք՝ իշխանութեան գլուխ գտնվող արմատականները, քանի որ նրանց պրոպագամի մէջ կան նոյն րէֆորմները։ Ժօրեսն ասում է, որ ֆրանսիական կազմակերպված պրոլետարիատը մազաչափ անգամ չէ շեղվում իր դաւանանքից, նա մազաչափ անգամ չէ հրաժարվում իր պրոգրամի արմատական պահանջներից։ Միայն նա շեշտում է ներկայումս գործնական և հասունացած պահանջների վրա, թողնելով ապագային, աւելի արմատական պահանջների իրագործումը։

Ահա այդ հասունացած և այժմ և եթ իրագործելի պահանջները ֆրանսիական պարլամենտի ինչպէս և առաջիկայ պատգամաւորական ընտրութիւնների առիթով, — որոնք տեղի պիտի ունենան մի քանի ամսից յետոյ — ֆրանսիական աշխատաւոր դասի ուշադրութեան յանձնելու համար՝ Միացեալ Սօցիալիստական կուսակցութեան Ազգային Խորհուրդը բաց է թողել մի մանիֆեստ, որի միայն եզրակացութիւնը «Humanité» թերթից առաջ ենք բերում այստեղ.

Քաղաքացիներ!

Գործադրութեան մարդիկ, և վճռած՝ Պետութիւնից խլելու ձեր քաղաքական և սինդիկալ կազմակերպութեան ոյժով՝ այն բոլոր րէֆորմները, որոնք կարող են փոքր ինչ թեթևացնել ձեր տառապանքները և աճեցնել ձեր շարժման ազատութիւնը,—դուք պէտք է ասէք բարձրաձայն, որ հետևեալ անմիջական րէֆորմները՝

1) Սահմանափակել աշխատանքը օրական ութ ժամվայ,
2) Տարածել սինդիկատ կազմելու իրաւունքը Պետութեան, նահանգի և համայնքի բոլոր ծառայողների վրա,
3) Սօցիալական ապահովութիւն բոլոր վտանգների դէմ, անգործութիւնից սկսած մինչև հիւանդութեան դէպքում,
4) Պրօգրեսիվ հարկ եկամուտի և ժառանգութիւնների վրա,
5) Ազգայնականացում այն մենաշնորհների, որոնց՝ կապիտալը դարձրել է իր ամենաբարձր ամրոցները,
6) Համեմատական ներկայացուցչութիւն, ցուցակային քուէարկութեան հետ,

Այս բոլորը ձեզ համար ուրիշ ոչ այլ արժէք ունին, եթէ ոչ որպէս միջոցներ՝ աճեցնելու ձեր զօրութիւնը ձեր ամբողջական պահանջների իրագործման համար, և հիմնայատակ կործանելու շահագործող կապիտալիզմի բովանդակ շէնքը։ Դուք պիտի համախմբվէք ուրեմն բոլորդ, գործարանների կամ դաշտերի աշխատաւորներ, դասակարգային մի մեծ կուսակցութեան մէջ, սօցիալիստական մի կուսակցութեան մէջ, որը պիտի իրականացնէ բոլոր արդիւնաբերողների համար, արդիւնաբերական միջոցների համայնական սեփականութիւնը։

Քաղաքացիներ!

Ինչպէս միայն սօցիալիզմը կարող է հիմնել մարդկանց մէջ արդարութիւնը, այնպէս և միայն նա կարող է հիմնել արդարութիւնն ու խաղաղութիւնը ազգերի միջև։ Այն րոպէին, երբ դիւանագէտների թաքուն կոմբինացիաները և սեփականատէր դասակարգերի նենգամիտ գործողութիւնները բազմապատկում են ընդհարման վտանգները, դուք չը պիտի բաւականանաք յայտարարելով բոլորին, և՛ կառավարողներին, և՛ սեփականատէրերին, որ դուք չէք ցանկանում երբէք պատերազմ, որը ուրիշ բան չէ, բայց եթէ վտանգված մենաշնորհների և նեղն ընկած դասակարգերի՝ ընդհանուր ուշադրութիւնը այլ կողմ սևեռելու մի խաղ, դուք պիտի դարձնէք պատերազմն անհնար, վանելով կառավարութիւնից այն անձանց, որոնց համար միայն շահաւէտ է պատերազմը, և իշխանութեան գլուխ բարձրացնելով՝ ձեր դասակարգը։

Պէտք է, որ բանուորական Ինտերնացիոնալը շարժվի և ոտքի կենայ փրկելու համար միաժամանակ ազգերի անկախութիւնը և աշխարհի խաղաղութիւնը։ Պէտք է որ նա ապահովէ, ժողովուրդների անբռնաբարելի ազատութեան մէջ, տիեզերական պրոլետարիատի ազատ զարգացումը։

Պատրաստվեցէք ուրեմն, քաղաքացիներ, նուաճելու յանուն սօցիալիզմի, քաղաքական իշխանութիւնը, անհրաժեշտ գործիք աշխատանքի և մարդկութեան ազատագրութեան։ Դուք այժմեանից և եթ բաւական բազմաթիւ, բաւական կազմակերպված էք, բաւական գիտակից, զգացնել տալու համար ձեր զօրութիւնը աշխարհի ամեն մասերում և թշնամի դասակարգի ձեռքից խլելու համար իշխանութիւնը։ Կորովով և վստահութեամբ առաջ ուրեմն դէպի կռիւ։ Առաջիկայ ընտրութիւնները կարող են լինել և պէտք է, որ լինեն ձեզ համար, աշխատանքի Հանրապետութեան համար, մի մեծ յաղթանակ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Իտալիա։ Միլանի տեղական սօցիալիստական կուսակցութիւնը, քննութեան առնելով ռուսական յեղափոխութիւնը, որոշեց դիմել սօցիալիստների միջազգային բիւրօյին, խնդրելով ի նկատի ունենալ, որ օտար պետութիւնները կարող են միջամտել այն նպատակով, որ ընդդիմադրեն ռուս յեղափոխականներին։ Այդ դէպքում սօցիալիստները մտադիր են նոյնպէս իրանց կողմից կազմակերպել զինաւորված միջամտութիւն և հաւաքել կամաւորներ։

—Գերմանիա։ «Times» լրագրում զետեղված են իշխան Հօհէնլօէի մի քանի յիշողութիւնները գերմանական ներկայ կանցլէր Բիւլօվի մասին, որ արտաքին գործերի մինիստր էր այն ժամանակ, երբ Հօհէնլօէն կանցլերի պաշտօնն էր վարում։ Դեռ այդ ժամանակ նա, իմանալով, որ Բիւլօվը աշխատում է իր տեղը բռնել, վախենում էր, որ չը լինի նա ձգի Գերմանիան դժուարին կացութեան մէջ։ «Ես, ասում է Հօհէնլօէ, աշխատում էի ասել կայսրին միայն ճշմարտութիւն։ Այսպէս, այն ժամանակ, երբ Գերմանիան հողային տիրապետութիւններ ձեռք բերեց Չինաստանում, Վիլհելմ II կայսրի երազն էր գրգռել ամբողջ երկիրը։ Իրերի այդպիսի վիճակը կարող էր շատ կորստաբեր լինել հայրենիքիս համար և ես շտապեցի ուղղակի խորտակել կայսրի ամբողջ քաղաքականութիւնը։ Բայց, իմ կարծիքով, իշխան Բիւլօվը երբէք չի տայ օրինաւոր խորհուրդ Վիլհելմ II-ին, այլ միայն կը շտապէ կատարել նրա ցանկութիւնները։ Իշխան Բիւլօվը շատ հաճելի մարդ է, բայց չափազանց մակերեսային»։

—Նորերս Վիլհելմ II կայսրը իր ծննդեան տարեդարձի օրը, մի ճառ արտասանեց, լի պատերազմասիրական ոգով։ Այդ առիթով «Նորդդեօյչէ Ալլգ. Ցայտունգ» յայտնի լրագիրը, որ պաշտօնական լինելու համբաւն ունի, տպեց մի յօդուած, որի մէջ հարկաւոր է համարում շեշտել, թէ կայսրը ցոյց կը տայ, որ նրա ետևից կանգնած է ազգը, պատրաստ կռուի։

«Նոյն իսկ կարճատես անձը—ասում է լրագիրը—պէտք է տեսնէ, թէ վտանգը մօտենում է։ Թագաւորը յայտնեց իր կամքը, պաշտպանել ազգի իրաւունքը և պատիւը կարեւոր վճիռների օրերում, անարդար յարձակումների դէմ և, չը խնայելով իր սեփական անձը, դիմադրել թշնամիների գրոհին»։ Այս խօսքերը ցոյց են տալիս, որ քաղաքական բարդութիւնների վտանգը բաւական մեծ է։

—Թիւրքիայում։ Վերջին ժամանակներումս—գրում է «Հայաթ»—Չինաստանից 10 մահմեդական ուսանողներ գնացել են Թիւրքիա, օսմանեան բարձրագոյն ուսումնարաններում շարունակելու իրանց ուսումը և Ն. Մ. Սուլթանի հրամանով ընդունվել են զինուորական դպրոցի բարձր դասարաններում։

—Սուլթանի սպանութեան փորձի մեղսակից, մահվան դատապարտված Ժօրիսի դատը Կ. Պօլսի վճռաբեկ ատեանի առաջ է հանվել, մահվան վճիռը բեկանել տալու համար։

—Կ. Պօլսից «Մ. Քz ecFr»-ին հեռագրում են, որ Թուրք կառավարութիւնը մի յիշատակագիր է ուղարկել իր արտասահմանեան ներկայացուցիչներին, պետութիւններին հաղորդելու համար։ Այդ յիշատակագրի միտքն այն է, որ հակառակ Դրան Պետութիւնների ջանքերին, Բուլղարական յեղափոխական կոմիտէները շարունակում են իրանց վնասակար գործունէութիւնը, Մակեդոնիայում սարսափ տարածելու համար։ Բ. Դուռը հրահանգ է տալիս իր ներկայացուցիչներին քաղաքակիրթ աշխարհքին այն եղեռնական գործունէութիւնների մասին, որոնցով զբաղված են Բուլղարական յեղափոխականները հակառակ բոլոր բարենորոգչական ձեռնարկների յեղափոխութեան ոջխերը շարունակում են գոյութիւն ունենալ Բուլղարիայում։

—Իտալացի մի զինուոր սպանութեան պատճառով Կանէայում (Կրետէում) Իտալացի ընդհանուր հիւպատոսը պահանջել է զոհի ընտանիքին ի նպաստ տուգանք, յանցաւորների պատժվելը և պաշտօնական ներողութիւն։ Սրէյական կառավարութիւնը տուգանքը վճարած չը լինելու համար, ընդհանուր հիւպատոսը պնդեց իր պահանջի վրա, և իր կառավարութիւնից ստացած նահանգի համաձայն, գրաւեց իտալական բաժնում գտնվող մաքսային հասոյթները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 յունվարի

ԽԱՐԿՈՎ, 22 յունվարի։ Երկաթուղային արհեստանոցներում արհեստաւորների ընդունելութիւնը վերջացել է։

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՎ, 22 յունվարի։ Նահանգական զեմստվային ժողովը մերժեց զեմստվոի միջոցներից Պետական Դումայի անդամներին ռոճիկ տալու հարցը։ Որոշված է միջնորդել զէմստվոյին, յանձնելու համար այն միջոցները, որը ծախսել է ազգաբնակութիւնը զինուորը մնացնելու շնորհիւ։ Օվացիաներ սարքեցին գործադուլների ժամանակ վիրաւորված ձայնաւոր Պաշչենսկուն։ Զայրոյթ է յայտնված գործադուլ անողների պատճառած բռնագրաւիկ վարմունքների առիթով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Գաղթականական գլխաւոր վարչութեան մէջ վարչութեան կառավարիչ Գլինկայի նախագահութեամբ սկսեցին մասնաժողովի նիստերը՝ գաղթականական գործը գաւառական գործիչների մասնակցութեամբ ընդարձակելու համար միջոցներ որոշելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ «Русь» թերթը հաղորդում է, որ Մինիստրների խորհուրդը որոշեց՝ որ այն հրեաները, որոնք սովորել են միջնակարգ դպրոցներում և դասընթացի աւարտման վկայական ունին, պէտք է ընդունվեն բարձր ուսումնարաններում առանց սահմանափակելու տոկոսը։

ԿԻԵՎ, 22 յունվարի։ Գեներալ-նահանգապետը դադարեցրեց «Кіевск. Отголоски» թերթը, որը լոյս էր տեսնում «Кіевск. Отклик.» թերթի փոխարէն։ Այսօր կայացաւ Պետական բանկի Կիեվի գրասենակի նոր շինութեան օծումը։

ՌԵՍԻՆԱ, 22 յունվարի։ (Ստեֆանի) Առաւօտեան Վեզուվի հրաբուխը սաստիկ ժայթքեց։ Լավայի հեղեղը թափվում է հարաւարևմտեան կողմից, սպառնալով երկաթուղուն։

ՊԱՐԻԶ, 22 յունվարի։ Շնէյդերի և Կրեզոյի գործարանում հրդեհ առաջացաւ, ինչպէս ասում են, բուլղարական կառավարութեան համար պատրաստված նոր թնդանօթները անպէտք են դարձել։ (Հավաս)։

ՊԵԿԻՆ, 22 յունվարի։ (Րէյտեր) Վերսկսվեց ամերիկացիներին բօյկոտի ենթարկելը։ Պահանջում են մաքսատան դիրեկտոր ամերիկացի Դրիւին արձակել պաշտօնից։

ՀՈՆԳԿՈՆԳ, 22 յունվարի։ Զինված ամբոխը կողոպտեց միսիօներ Բիտտի տունը։ Կանտոնում օտարերկրացիները անհանգստութեան մէջ են, որովհետև ոստիկանական ոյժը բաւարար չէ։

ՀՌՈՄ, 22 յունվարի։ (Ստեֆանի) Թագաւորը ընդունեց Սօննինին և, լուրերին նայելով, յանձնարարեց նրան կազմել նոր կաբինետ։

ԱԼԺԵՍԻՐԱՍ, 22 յունվարի։ (Հավաս) Նիստերի երկարատև միջումների ժամանակ տեղի են ունենում կարևոր բանակցութիւններ և մասնաւոր ձգտումների մէջ հասնել այնպիսի համաձայնութեան, որը պահպանում են շահագրգված պետութիւնները՝ Միացեալ-Նահանգները, Ռուսաստանը, Իտալիան։

ԼՕՆԴՕՆ, 22 յունվարի։ (Րէյտեր) «Տրիբունա» թերթը քննադատելով եապօնական պարլամենտում անգլիական զօրքի մասին արված հարցապնդումը, յայտնում է, որ Անգլիան պատրաստ է պաշտպան հանդիսանալ Եապօնիային, բայց ցոյց չի տալ եապօնական վերահսկողութիւնը անգլիական զինուորական գործողութիւնների վրա։ Անգլօ-եապօնական դաշինքի գործողութիւնը սահմանափակվում է Հեռաւոր Արևելքում զինուորական և ծովային գործին վերաբերող տեղական գործերով։

24 յունվարի

ԲԱԳՈՒ՝ 22 յունվարի։ Այսօր լոյս տեսաւ «Баку» թերթը նոր խմբագրութեամբ։ Նա սօցիալ-ռամկավար ուղղութիւնից անցաւ սահմանադրական-ռամկավարական և «Бакинск. Извѣстія» թերթի հրատարակութեան իրաւունքը ձեռք բերաւ։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Իրբիտ գնացին Պետական, Սիմբիրսկի, Վոլժսկօ-Կամսկի և Սէվերնի բանկերի բաժանմունքները տօնավաճառին մասնակցելու։

ԿՕՍՏՐՈՄԱ, 22 յունվարի։ Նահանգական զեմսկի ժողովը քննելով Պետերբուրգում կայացած զեմստվային քաղաքային գործիչների համաժողովի պատգամաւորների զեկուցումը, ձայների աննշան մեծամասնութեամբ համաձայնութիւն յայտնեց համաժողովի որոշմանը։ Կոմս Վիտտէյի հրաւէրին՝ մասնակցել անել զեմստվային գործիչներին, հարկաւոր դէպքում գործի կանչելու համար, ժողովը որոշեց գոհացում տալ։

ՍԱՐԱՏՕՎ, 22 յունվարի։ Նահանգական զեմստվային ժողովը բացվեց։ Ծախսերի ցուցակը վարչութիւնը կրճատեց 50,000 րուբլիով, ելի կը կրճատվէին։ Հերթական է համարվում անասունների պաշարի հարցը։ Պարզվեց, որ պետական գանձարանից տուած միջոցները բաւական չեն։

ՆԻԿՕԼԱՅԵՎ—ԽԵՐՍՈՆՍԿԻՅ, 22 յունվարի։ Ազգաբնակութիւնը սկզբում պասսիվ կերպով էր վերաբերվում Պետական Դումայի ընտրութիւններին, այժմ գրվում են մեծ յաջողութեամբ։ Իրաւակարգի կուսակցութիւնը ընդարձակ չափերով ագիտացիա է անում։

ԻՐԿՈՒՏՍԿ, 22 յունվարի։ Սկսվեց քաղաքային դումայի ընտրութիւնները, որ երկու անգամ յետաձգվեցին հասարակութիւնը խաղաղացնելու պատճառով։

ՄԻՆՍԿ, 22 յունվարի։ Հակահրէական անկարգութիւնների երկիւղը զուր հանդիսացաւ։ Իշխանութիւնը ամեն միջոցներ ձեռք էր առել ազգաբնակութեան կեանքը և գոյքը ապահովելու համար։

ՊԱՎԼՕԳՐԱԴ, 22 յունվարի։ Նովօմոսկովսկի վօլօստնոյ ժողովը վճիռ կայացրեց համայնքում գտնվող բոլոր մասնաւոր կալուածատիրական հողերը համայնական տուրքերի ենթարկելը։ Մի քանի համայնական ժողովներ վճիռներ են կայացրել համայնքի գրագիրների, դատաւորների և տասնապետների ռոճիկները պակասեցնելու։ Վճռված է նուիրաբերել սովի մատնված նահանգներին հացամատակարարութեան պաշարի աւելորդ մասը, շատ համայնքներում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի։ Ռուսական և օտար թերթերի մէջ լիշված էր, որ Մօսկվայի նախկին գեներալ նահանգապետ Դուրնօվօն Պետական Խորհրդում յայտնել է, որ Մօսկվայի դեկտեմբերեան անկարգութիւնների պատասխանատուութիւնը կենդրոնական կառավարութեան վրա է ընկնում։ Գործակալութիւնը լիազօրութիւն է ստացել յայտնել որ այդպիսի բան Պետական խորհրդում չէ եղել։ Դուրնօվօն այդպիսի բան չէր էլ կարող ասել։ Վարշավայի պօլիտեխնիկումի փակելու լուրը առևտրական և արդիւնաբերական մինիստրութեան մէջ չէ ճշտվում։

ԼՕՆԴՕՆ, 23 յունվարի։ «Դէյլի-տելեգրաֆը» հաղորդում է Տօկիօյից, որ եապօնական շոգենաւային ընկերութիւնը մտադիր է գնել ամերիկական ընկերութիւնից «Կորէ», «Մանջուրիա», «Մօնղօլիա», «Չինաստան» և «Սիբիր» շոգենաւերը։ Եապօնական ընկերութեան դիրեկտորը գնաց Ամերիկա բանակցութիւնների համար։ Եապօնացիները մտադիր են տարածել իրանց րէյսերը մինչև Բրազիլիա գերմանական ընկերութիւնների հետ մրցելու նպատակով։

ԿԵԼՑԻ, 23 յունվարի։ Գիւղատնտեսական անդամների նախընտրական ժողովը կայացաւ։ Պարզվեց, որ գերիշխող են հանդիսանում ռէալ—քաղաքական և ազգային ռամկավար երկու կուսակցութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը համաձայն է Մօսկվայի համալսարանի վարչութեան միջնորդութեան՝ առարկայական սիստեմ մտցնելու վերաբերմամբ-մօտակայ սեմեստրում։ Արհեստակցական բանուորների կենդրոնական բիւրօն առաջարկում է բանուորական ընկերակցութիւնների բոլոր անդամներին—շտապել օգտվելու ընտրողական իրաւունքից։ Հարաւային Ռուսաստանի հանքարդիւնաբերողների 30-րդ ժողովը, որ նշանակված էր 1905 թ. նոյեմբերի դէպքերի պատճառով,—կը կայանայ Խարկովում մարտի 1-ին։

ԿՕՍՏՐՕՄԱ, 23 յունվարի։ Կազմակերպվում է մի ընկերութիւն, որ պիտի հրատարակէ ազատամիտ ուղղութեամբ մի ամենօրեայ լրագիր, որ պիտի խմբէ իր շուրջը չափաւոր կուսակցականներին։ Շատերը մտան ընկերութեան մէջ։ Առանձնապէս իր նախաընտրական ագիտացիայով աչքի է ընկնում առևտրա-արդիւնաբերական ընկերակցութիւնը, որ տարածում է մի շարք կոչեր գործարաններում աշխատողների մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի։ Պետերբուրգի բարձրագոյն դպրոցների հայ և թուրք ուսանողները ընտրեցին իրանց միջից 15 հայ և 15 թուրք, որոնք գնալու են Կովկաս բերանացի պրոպագանդով աջակցելու երկու թշնամի ժողովրդներին հաշտեցնելու համար։ Հաշտարար ուսանողների առաջին խումբը դուրս եկաւ արդէն Պետերբուրգից, միւսը գնալու է մօտ օրերս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվ.։ Պետական խորհուրդը վերջացրեց ընկերութիւնների և ընկերակցութիւնների վերաբերեալ նախագծի քննութիւնը։ Ընդհանրապէս նախագծի գլխաւոր հիմունքները ընդունված են խորհրդից։

Ընկերութիւնները բացվում են յայտարարական կարգով։ Տարաձայնութիւն ծագեց ընկերութեան փակման հարցի առիթով։

ՊԱՎԼՕԳՐԱԴ, 23 յունվ.։ Պատերին կպցրած էին գեներալ-նահանգապետի հրամանը, որով անշարժ կայքերի տէրերը, որոնք չեն վճարի ժամանակին պետական, զեմստվային և քաղաքի հարկերը, բացի պօլիցիայի միջոցով տուրքերի առումը—կենթարկվեն վարչական պատժի։

ԿՕՍՏՐՕՄԱ, 23 յունվարի։ Ագրարային շարժումները Վարնավինսկի գաւառում վերջացան։ Նահանգապետի անձնականապէս արած բացատրութիւնները ազդեցին գիւղացիների վրա, որոնք վերջ տուին անտառների կտրելուն։

ՄԻՏԱՒԱ, 23 յունվարի։ Տուկկումի քաղաքային վարչութեան յարքունիս գրաւած գանձարանը բանալու ժամանակ, գտնվեց քաղաքային և խնամակալական փողերից մօտ 40,000 ր. պակասորդ. գանձարանի կողպէքները ամբողջ են։ Գողութիւնը կատարել են, ըստ երևոյթին, խառնակութիւնների ժամանակ այնպիսի մարդիկ, որոնց մօտ գտնվելիս է եղել գանձարանի բանալին։ Քաղաքագլուխը անհետացել է։

ԼՕՆԴՕՆ, 23 յունվարի։ «Տրիբունա»-ի աշխատակիցը խօսակցութիւն ունեցաւ Հայեաշի հետ՝ Օյշի յարուցած յայտնի դէպքի առիթով։ Եապօնական դեսպանը յայտնեց, որ անգլիական հասարակութեան քիչ է յայտնի անգլօ-եապօնական եօթներորդ դաշնադրութեան յօդուածի մասին։ Այդ յօդուածը չէ ներկայանում հասարակ ձևականութիւն։ Մեծ Բրիտանիայի և Եապօնիայի զինուորա-ծովային իշխանութիւնները պէտք է խորհրդակցեն պաշտպանութեան միջոցների մասին։ Եապօնիան ընդունում է, որ Մեծ-Բրիտանիան պէտք է գերակշիռ նոյնպիսի ուժեղ զօրքով, ինչպէս նրա դաշնակիցը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌՈՂՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզային հ.
ՉԻՔՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներվային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթի, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Զ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐԻ-ԲԺԻՇԿ ՇԷՅՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ՏՈՒՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԶԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.
Խ. Յ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԻԱԶԵԱՆ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ [illegible]
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կաղնեսակայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղնեսկի փողոցից № 2,
(ա. օ.) 77—300

ԲԺԻՇԿ
Տ. Խասխանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ. Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նատուխովի տանը։
(Ե. Հ. Չ.) 5—15

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կոջորնօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆօն № 791։ (ա. օ.) 52—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 42—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (Ե.Հ.)36—11

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչեա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 36—100

ՏԻԿԻՆ ՅՕՐՏԱՆՍ ԴԱՒԹԵԱՆՑ
Շվէյցարուհի, դիպլօմով—տալիս է ֆրանսերէնի դասեր՝ խօսակցութիւն, քերականութիւն՝ գրականութիւն։ Մէթոդ Բերլից։ Գերմաներէնի և անգլերէնի խօսակցութիւն։
Հասցէն՝ Гудовичъ 6, домъ Питоева.
2—3

ԹԱՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ այս յունուարի 25-ին, ցերեկվայ ժամը 1-ին Քաղաքային տանը նշանակված է աճուրդ՝ քաղաքի զանազան մասերի շրջաններում խճուղիների սալայատակների նորոգութեան համար։ Աճուրդի պայմանների մասին տեղեկութիւններ, օտրելի է ստանալ ամեն օր, ցերեկվայ ժամի 10-ից մինչև 2-ը վարչութեան շինարար. բաժանմունքում։
2—3

Ծախվում են զանազան տեսակ գործեր շատ էժան գներով.
Թիֆլիսի Վելիկօկնեաժեսկի փող. № 41 տուն Ծովեանեանի։
2—3

Մի հայուհի ցանկանում է դասեր ունենալ հայերէնից, ֆրանսերէնից, իսկ ռուսերէնից՝ մինչև առաջին դասարանը։ գիտէ և երաժշտութիւն։ համաձայն է գնալ նաև քաղաքներ, փոքր ընտանիքի մէջ, հասցէն՝ Графская ул., Троицкій переулокъ., д. Теръ-Никогосова № 4 и 7 узнать въ обществѣ учительницъ. (Կ.Ե.) 1—2

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Ուսումը վերսկսվում է յունվարի 9-ին
Բեհբութեան փ. տ. № 25.

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1906 Թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
I. եր. Օրացոյց—կազմեց Ն. ք. Նիկողոսեան. բնախ մարեր. առածներ, հանելուկներ, շուտասելուկներ. II, եր. 1) Ոսկի դարի շուրջը—Սլաքի, 2) Նշմարներ Հայաստանի աշխարհագրութիւնից—Մ. Վ. Բաշխեանց, 3) Օրվայ հարցեր—Բժ. Ա. Բուդաղեանի, 4) Ինչպէս օգնել կարծեցեալ մեռածներին բժշ. Բ. Նաւասարդեանի, 5) Առողջապահական գիտելիքներ—Դ-ր Բեկլարի, 6) Կինը և աղամարդը—Տիկ. Հրանոյշի, 7) Հրատապ հարցերի շուրջը—պրոֆ. Վ. Զոմբարտի, 8) Քաղաքատնտեսական զրոյցներ—Ե. Թոփչեանի, 9) Ինչպէս են խորտակում մեր մտաւոր—Բժիշկ Կ. Աճեմեանի, 10) Ինչպէս են խաբեբաները պատրաստում—Մօյօժովսկի, 11) Ինչքը են քաղցր խմիչքները պատրաստում, 12) Երեխաներին ինչով պէտք է կերակրել—Դոկտ. Կ. Փաշայեանի. 13) Տերսիմ և տերսիմցիներ—Անդրանիկի. 14) Եւրոպացիների կարծիքը հայերի մասին—Ե. Թ., 15) Հայոց կենդանիներ—Վ. Լուկինիչի, 16 Զարմանալի բոյսեր—Ա. Բելմիշեանի, 17) Կայծակ և էլեկտրականութիւն—Վ. Լուկինիչի, 18) Հայր և որդի տեսակներ—Վ. Ղազարեանի, 19) Ինչպէս պէտք է հաւ պահել—Բօմերի, 20) Հացկոտ զրոյցներ—Պետրով քահ., 21) Թիւրքահայերի վերջնական կարգը, 22) Րաֆֆու յիշատակարանից, 23) Տարօրինակ գիւտեր, 24) Գիտական խաղեր. 25) Թուաբանական խաղեր ու խնդիրներ, 26) Ընտիր հատուածներ, 27) Հայկական պատմ. էջերից, 28) Օգտակար խորհուրդներ, 29) Վանայ երգերից, 30) Զուարճալի հատուածներ, 31) Հնարքներ քաղաքական, 32) Ժողովրդական երգերից, 33) Աշուղական հարցումներ, 34) Բանաստեղծական նշմարներ, 35) Նմուշներ Օսմ. բանաստեղծութիւնից, 36) Ծիծաղի աշխարհից, 37) Որոնք են մարդու 3 պարտականութիւնները, 38) Րաֆֆու գրուածներից որն է ամենալաւը, 39) Ինչ է երջանկութիւնը և ինչպէս գտնել նրան, 40) Այլ և այլք։
Տ ա ր ա ծ ա կ «Ռուսահայ խմբագիրներ» [illegible] գրքոյկ «Ժողովածու» (1. Մշակ բանաստեղծութիւններ Ա. Ահարոնեանի և Վ. Փափազեանի, 2. Նմուշներ վրաց գրականութիւնից, 3. [illegible])։ ՄԻՑԱՆԱԿ 50 կոպ. գինը։
Պատի օրացոյցի գինը 50 կոպ.։
ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
Օրացոյց հայրապետ. ամեն. հայոց. Ազգային հաստատութիւններ.—Ն. ք. Նիկողոսեանի. [illegible] Բանւորների համար։ Իրաւագիտական տեղեկութիւններ։ Մուրհակ, Դրամատուրը։ Բնակարանների հարկ։ Պոստ, հեռագիր և հեռախօս։ Երկաթուղային ճանապարհներ։ Նաւագնացութիւն։ Զինուորագրական կանոններ։ Բ ժ շ կ ա ր ա ն. բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի։ Ինչպէս են խարդախում մեր խմիչքները—քիմիկոս Կ. Արաքեանի։ Ջուր—Դոկտ. Ա. Յակոբեանի։ Կեանք և մահ—Բժ. Ա. Բուդաղեանի։ Դիրք և առողջապահութիւն—Դոկտ. Կ. Փաշայեանի։ [illegible] Ինչ է բարեգործութիւնը—պրոֆ. Շմոլլերի։ Ազգային հարցի մասին—պրոֆ. Վ. Զոմբարտի։ [illegible] Գիտական նորութիւններ։ Օգտակար գիտելիքներ։ Հետաքրքրական։ Ցիշատակարան։
Գրպանի օրացոյցի գինը 20 կոպ.։
Գ ա ւ ա ռ ա ց ի գ ն ո ղ ն ե ր ի ն զ ե ղ չ ։
Սեղանի «Լոյս» օրացոյց հանդէսը մեկից անկախ պատճառով այս տարի լոյս չէ տեսել։ «ԼՈՅՍ» ՀԱՆԴԷՍԸ ԱՄՍԱԳԻՐ դարձնելու համար՝ դիմված է արդէն պատշաճաւոր իշխանութեան։
Դիմել՝ Тифлисъ Мадатовская ул. 5. Е. Топчяну. 3—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ՄՈՒՐՃ“
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր.,
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.),
ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՌՈՒԲԼԻ
Ծանօթութ. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մարտի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալները.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և «Сотрудникъ» գրավ.
Բալախանի—բժ. Բ. Օհանեան։
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սևծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Սիմֆերոպոլ—պ. Նիկ. Հայրապետեան։
Թիֆլիս—«Գուտտենբերգ», «Կենտրոն.», «Զ. Գրիգոր. գրավ. և «Հերմէս» տպ.
Վլադիկավկազ—Յ. ք. Սաուրեան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և պ. Հ. Պանիրեան։
Եգիպտոս—դոկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզէլի—պ. Դ. Մելիք-Աբրահամեան։
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան։
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան։
1906 թւականի նոր բաժանորդները կը ստանան 1905 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամսների «Մուրճ» ձրիաբար։ 3—10

ԲԱՑՎԱԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐՇԱԼՈՅՍ
Գրական, հասարակական, քաղաքական եւ տնտեսագիտական
ՕՐԱԹԵՐԹ
24 պատկերազարդ յաւելուածներով, որ կանոնաւորապէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ։
Թերթի ձգտումն է պետական սահմանադրական կարգ, կովկասեան ներքին լայն ինքնավարութիւն, տեղական զեմստվօ, զեմստւօյական մանր միութիւններ և ազատ կապակցում այդ մանր միութիւնների։
Հողի բաւարար բաժիններ սակաւահող գիւղացուն, պետական և կալուածական հողերից, և օրենսդրական բաւարարութիւն բանւորի կենսական պահանջներին։
Ընտրական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս և մասնաւորապէս մեր դպրոցական գործի կազմակերպութեան, եկեղեցական կալուածների անտեսութեան և հասարակական հիմնարկութիւնների ղեկավարութեան մէջ։
Թերթի գլխաւոր ուժը ուղղված կը լինի հայ կեանքի պահանջներն առաջ մղելու և աշխատելու նրանց իրականացմանը դեմոկրատ ոգով։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

	ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ
Տարեկան	7 ր. — —	32 ֆրանկ 28 մարկ 28 շիլ. 7 դոլլար
Վեց ամիսը	4 » — —	20 » 16 » 16 » 4 »
Երեք ամիսը	2 » 25 —	12 » 10 » 10 » 2 »
Մի ամիսը	— — 75 »	4 » 3 » 3 » 1 »

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս. յունվ. 4 ր. և յուլիսին 3 ր.
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում
Կարելի է գրվել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա № 11) կամ գործակալների մօտ։ Ուրիշ տեղերից դիմել՝ Редакція газеты «Аршалуйсъ» կամ Tiflis, Rédaction du journal «Arschalouis». 3—3

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւն
սրանով յայտարարում է, որ այս տարվայ յունվարի 26-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է մրցութիւն կանալիզացիա կազմելու համար Վախտանգովսկայա և Կոլլեժսկայա փողոցներում, 7-րդ քաղաքամասում.
50 սաժ. բետոնի խողովակի 0,25×0,16
10 սաժ. » » 0,375×0,25
2 ջրհոր։
Վերջին յիշված աշխատանքներից իւրաքանչիւրի գնի մասին առանձին պէտք է գրաւոր յայտարարութիւն տալ կնքված ծրարներով մինչև յունվարի 26-ը։
Սակարկել ցանկացողները կարող են պայմանները տեսնել վարչութեան շինարար բաժանմունքում ամեն լի օր ցերեկվայ ժամի 1—3 գործ № 36/905 թ.։ 3—2

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ
(пятнадцатый годъ изданія)
НА ЕЖЕМѢСЯЧНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ
ВѢСТНИКЪ ВИНОДѢЛІЯ
Журналъ выходитъ подъ редакціей ВАСИЛІЯ ТАИРОВА, безъ предварительной цензуры, книжками въ 4 и болѣе печатныхъ листовъ, по самой обширной программѣ и при постоянномъ сотрудничествѣ выдающихся иностранныхъ и русскихъ ученыхъ и специалистовъ.
«ВѢСТНИКЪ ВИНОДѢЛІЯ» рекомендованъ Учеными Комитетами Министерства Народнаго Просвѣщенія и Министерства Государственныхъ Имуществъ; кромѣ того, ему присуждено семь высшихъ наградъ на Россійскихъ и Международныхъ выставкахъ.
ПОДПИСНАЯ ЦѢНА, съ перес. и дост.: на годъ—6 р., на полгода—3 р. 50 коп.
АДРЕСЪ редакціи и главной конторы: Одесса, Канатная, 19

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.